


ԹԻՏԱ-ՄԱՍՍԱՆՑԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ



ՊՐՈՖ. Ի. Ֆ. ՊՈԼԱԿ

ԻՆՉՈՊԵՍ Է ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՏԻԵԶԵՐՔԸ



ՀԱՅՈՒՏՏՀԱՐԱՏ

523.1	12316
Դ-77	Պողկ Ի. Ֆ.
Ինչպես և Կառուցման օրենքորդ.	2 թ. 504.



ՊՐՈՖ. Դ. Ֆ. ՊՈԼԱԿ

523.1
Դ-77

ԱՑՈՒՀԱԿ 1961

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՏԻԵԶԵՐՔԸ

1937/6



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

1947

A II
14469

КАК УСТРОЕНА
ВСЕЛЕННАЯ
(на армянском языке)
Лригиз, Ереван, 1947



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿԻՐԸ ԵՎ ԵՐԿԻՆՔԸ

Հնագարյան ժամանակներում մարդիկ աշխարհը պատկերացնում էին վիթխարի կլոր սենյակի նմանվող ինչ-որ մի բան։ Այդ սենյակի հատակը—երկիրն էր, պատերն ու առաստաղը—երկինքը։ Կարծում էին, թե երկրի մակերեսը ընդհանրապես տափարակ է, թե ինչ-որ մի տեղ այն ունի ծայր կամ եզր, միայն թե մինչև այդ շաշխարհի ծայրը» դեռ ոչ ոք չի հասել։ Երկնքի մասին այնպես էին կարծում, թե դա մի կարծր, կապույտ գմբեթ է, մի ինչ-որ հրաշալի, բյուրեղապակե կափարիչ, որը ծածկում է երկիրը։

Այսպիսով՝ դուքս էր գալիս, որ ամբողջ աշխարհը կամ Տիեզերքը ասես թե բաղկացած է երկու մասից—երկրից ու երկնքից։ Երկար ժամանակ երկիրը համարում էին Տիեզերքի գլխավոր մասը, կարծում էին, թե Արևը, Լուսինը և աստղերը շատ ավելի փոքր են երկրից, որ նրանց գոյությունը միայն նրա համար է, որ տաքացնեն ու լուսավորեն երկիրը։

Գիտությունը խորտակեց այդ միամիտ։ պատկերացումները։ Ոչ մի կարծր երկնակամար գոյություն չունի։ Գոյություն ոմի անձայրածիր տարածություն, որի մեջ գտնվում են երկնային լուսատուները, որոնց մի մասը մոտ է երկրին, մի մասն էլ հեռու է։ Գեղատեսիլ կապույտ երկնակամարը—դա սոսկ օդ է, որը պատում է մեր երկիրը կամ ինչպես ասում են, դա երկրի մթնոլորտն է։ Որքան բարձրանանք երկրից, այնքան օդը նոսր կլինի։ Արդեն 22 կի-

լոմենը բարձրության վրա, ուր 1934 թ. հասավ սովետական ըստ-
րատուստատը, օդը 15 անգամ նուր էր, քան երկրի մակերևույթի
ժողովության մոտ: Գիտնականների հաշվով՝ 300—400 կիլոմետր բարձրության
վրա, ուր մարդիկ դեռ չեն հասել, արդեն համարյա օդ չկա, իսկ է՛լ
ավելի բարձր սկսվում է օդազուրկ տիեզերական տարածությունը:
Օդը ո՛չ բոլորովին թափանցիկ է և ո՛չ բոլորովին անգույն: Արևե-
ցին վառ լուսավորության ժամանակ՝ երկրի մթնոլորտը լինում է,
կտպույտ և այնքան պայծառ, որ մեզ խանգարում է տեսնել աստ-
ղերը: Եթե մթնոլորտը շիներ, երկինքը ցերեկն էլ սև կրվար ինչպես
գիշերը, և կարելի կլիներ Արևի հետ աստղերն էլ տեսնել: Այսպի-
սով կապույտ երկնակամարը օդային մի վարագույր է, որի միջից
մենք տեսնում ենք հեռավոր լուսատուները:

Ինչ է ասում գիտությունը երկրի մասին: Նույնիսկ այն տե-
ղերում, ուր երկրի մակերևույթը բոլորովին հարթ է թվում, իրոք ոչ
թե հարթ է, ոչ թե տափարակ է, այլ ուսուցիկ: Այդ ամենից լավ
նկատելի է ծովի վրա, երբ ափից հեռանում է մեծ շոգենավը: Երբ
շոգենավը հասնում է հորիզոնին, այսինքն այն գծին, ուր երկինքը,
ինչպես թվում է մեզ, միանում է երկրին, նա կարծես թե սկսում է
չքառասույզ լինել. սկզբում չքանում է նավի կորպուսը, հետո ծխնե-
լուցուները, վերջապես, կայմերի կատարները: Այդ նշանակում է,
որ ծովի մակերևույթը տափարակ չէ. մեր և շոգենավի միջև կա
բարձրություն, որի հետևում էլ չքանում է շոգենավը: Դիտելով
այդպիսի երևույթները, գիտնականները գտան, որ երկիրը համար-
յա կանոնավոր գնդի ձև ունի: Հաջողվել է նաև չափել երկրի մեծու-
թյունը: Երկրագնդի տրամագիծը 13000 կիլոմետրից մի քիչ պա-
հան է, իսկ շոշագիծը հավասար է 40000 կիլոմետրի:


2. ԵՐԿՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Արդեն ավելի քան երկու հազար տարի առաջ գիտնականները
իմացել էին, որ երկիրը գունդ է: Բայց դրանից հետո գեռ երկար
ժամանակ բռնըն էլ կարծում էին, թե այդ գունդը ինչ-որ անհաս-
կանավի կերպով անշարժ կախված է տարածության մեջ, իսկ նրա
շողջը պտտվում են Արևը, կուսինը և աստղերը: Միայն շորև հար-
ցուր տարիի առաջ, 1543 թ. լեռացի աստղաբաշխ Նիկողայոս Կո-
պերնիկոսը բացատրեց, որ երկիրը շարժվում է: Մենք հիմա գի-

ունք, որ Արևը շատ ավելի մեծ է Երկրից և որ Երկիրը շարումակ պատվում է նրա շուրջը:

Իբ շրջանակի ճանապարհով Երկիրը ամենաարագասլաց հրետանային արկից էլ շատ ավելի արագ է սլանում. յուրաքանչյուր վայրկյան նաև անցնում է 30 կիլոմետր: Եթե խճնաթիւր թռչեր այդպիսի արագությամբ, նա Երկրագումդը կշրջանցեր 20 րոպեցում, իսկ Երկիրը Արևի շուրջը մեկ պտույտը կատարում է մի ամբողջ տարում, այսինքն 365 և քառորդ օրուգիշերվա ընթացքում: Հետեւ վարար Երկիրի ճանապարհը կամ ինչպես աստղաբաշխներն են առում՝ նրա ուղևծիրը վիթխարի շափերի է հասնում:

Երկիրի ուղևծիրը ո՛չ բոլորովին վրանոնավոր շրջանագիծ է, այլ մի առանձին դիմ, որ մաթեմատիկոսները էլիպս են անվանում: Այն կարելի է գծել ծայրերը կապած և երկու քորոցի վրա անցկացրած թելի միջոցով (նկ. 1): Եթե մատիտը թղթի վրա այնպես տանենք, որ թելը շարունակ ձգված լինի, ապա կստացվի էլիպս: Այն




Նկ. 1. Ինչպես գծել էլիպս

կետերը, ուր խրված են քրոտցները, կոչվում են էլիպսի ֆոկուսներ. սրանց մեջ տեղում գտնվում է էլիպսի կենտրոնը: Երկրի ուղեծրութիւնը էլիպսը քիչ է տարրերում շրջագծից, որովհետև նրա ֆոկուսները կենտրոնին մոտիւկ են գտնվում: Եթե դրբի մի էջի վրա այդ մեջ էլիպս նկարենք, ապա մենք այն կանոնավոր շրջագծի տեղ կընդունենք, միայն թե Արևը կլինի ոչ թե կենտրոնում, այլ հենց ֆոկուսներից մեկում: Որովհետև Երկիրը պատվամ է ոչ թե շրջագծով, այլ էլիպսով, ուստի Երկրից մինչև Արևը եղած հեռավորությունը տարվա ընթացքում մի քիչ փոփոխվում է: Միշտն հաշվով այն կազմում է մոտ 150 միլիոն կիլոմետր:

Համապարփն (հենց եղբ հյուսիսային կիսագնդում ձմեռ է) Արևը $2\frac{1}{2}$
միլիոն կիլոմետրով մոտ է մեզ, հուչիսին (մեջանում բոյն ամառ-
վա ժամանակ) այդ նույն շափով հեռու է լինում: Այստեղից պարզ
է, որ տարվա եղանակների հաջորդումը տևելի է ունենում ոչ թե
այն պատճառով, որ Արևը մերթ մոտիկ և մերթ հեռու է լինում, այլ
ուրիշ՝ պատճառով, որը մենք հիմա կիմանանք:

Երկիրը ոչ միայն Արևի շուրջն է պտտվում տարվա ընթացքում,
այլև պտտվում է ինչպես հոլ (ֆոփկ), կամ ինչպես ասում են,
պտտվում է իր առանցքի շուրջը, լիակատար պտույտ կատարելով
մեկ օրուգիշերվա ընթացքում: Այդ առանցքն իհարկե երևակայական
է. այն անցնում է ոչ թե Երկրի ուղեծիրի նկատմամբ ուղղահայաց,
այլ թեք ուղղությամբ, $66\frac{1}{2}^{\circ}$ անկյան տակ (նկ. 2): Երկրի առանցքը
մշտապես պահպանում է այդ ուղղությունը: Դրանից էլ տեղի է
ունենում տարվա եղանակների փոփոխումը:



Նկ. 2. Երկրի պտույտը Արևի շուրջը: Ը տառով (վերևում) նշված է հյուսիսային քեռուը, Խ տառով (ներքեւում) -հարավային քեռուը. քեռոների վրայով երեսկայական գիծ է անցկացված: Նկարում արված է Երկրի ուղեծերի մի փոքրիկ մասը: Նկարում հեռավորությունները ճշշտ չեն. իրականում Երկրի և Արևի միջև եղած հեռավորությունը համարյա է 2000 անգամ ավելի
է. Երկրի տրամագծից:

Օրինակ, Երբ Երկիրը, գտնվում է 2-րդ նկարի ձախ կողմի դիրք-
քում, Արևը լուսավորում է գլխավորապես մեր հյուսիսային կիս-
սագումը: Այդ ամբողջ կիսագնդում, այսինքն հասարակածից դիւ-
պի հյուսիս ամառ է լինում: Այդ ժամանակ Արևի ճառագայթները

ժողովութին շնն ընկնում հարավային բևեռի վրա, այնտեղ բևեռային ճրկար գիշեր է լինում, իսկ ամբողջ հարավային կիսագնդում, աւտինքն հասարակածից զեպի հարավ ձմեռ է լինում: Կես տարուց հետո, երբ Երկիրը 2-րդ նկարի աջ կողմի դիրքն է ընդունում, մեզ մոտ, ընդհակառակը, ձմեռ կլինի, իսկ հարավային կիսագնդում — ամառ:

Երկրի օրուգիշերվա պտույտը մենք չենք զգում, ինչպես և չենք զգում մեր թափշը Արևի շուրջը: Սակայն կարելի է ասել, որ այդ պտույտը մենք շարունակ տեսնում ենք. ամբողջ երկնակամարը մշտապես կարծես թե պտտվում է արևելքից արևմուտք, ինչոր մի առանցքի շուրջը, որ հնադարյան գիտնականները «աշխարհի առանցք» էին անվանում: Դրա շնորհիվ Արևը, Լուսինը և աստղերը երկնքի վրա շարժվում են, արևելքից արևմուտք, ամեն օր ծագում են ու մայր մտնում: Բայց այդ շարժումը երևութական է. ոչ թե անձայրածիք Տիեզերքն է արևելքից արևմուտք պտտվում «աշխարհի առանցքի» շուրջը, այլ մեր փոքրիկ Երկիրն է իր առանցքի շուրջը պտտվում հակառակ ուղղությամբ, արևմուտքից արևելք: Այսպիսով «աշխարհի առանցքը» սոսկ մեր Երկրի առանցքն է:

Իսկ Արևը, մի՛թե նա անշարժ կանգնած կամ կախված է տարածության մեջ: Հնարավո՞ր է արգսոր այդ: Ոչ, դա հնարավոր չէ: Տիեզերքում ոչ մի անշարժ բան չկա, ամեն ինչ շարժվում է, ամեն ինչ փոփոխվում: Շարժվում է նաև Արևը և այդ շարժման մասին մենք կապատճենք հետադայում: Այժմ ասենք միայն, որ Արևի այդ իսկական շարժումը ընթերցողներից ոչ ոք չի տեսել: Մենք նկատում ենք նրա միայն երևութական (մեզ թվացող) — օրական և տարեկան շարժումները: Առաջին շարժումը տեղի է ունենում նրանից, որ Երկիրը պատվամ է, իր առանցքի շուրջը, իսկ Երկրորդը նրանից, որ Երկիրը պատվամ է Արևի շուրջը:

3. ԼՈՒՍԻՆԾ ԵՐԿՐԻ ԱՐԲԱՆՅԱԿՆ է

Երկիրը մենակ չէ Արևի շուրջը իր կատարած՝ հավիտենական պտտույտի մեջ: Նրան ուղեկցում է իր անբաժան ուղեկիցը կամ արքանյակ — կամինը: Լուսինը մեզ ավելի մոտիկ է, քան մնացած բոլոր լուսառումները. նա համարյա 400 անգամ ավելի մոտիկ է, քան Արեւը: Մինչդեռ լուսինը մեզ երևում է զրեթե նույն մեծու-

թյամբ, ինչոր Արևը: Հետևաբար նա պետք է, որ իրոք շարա հարացուր անդամ փոքր լինի Արմեց:

Լուսինը Երկրից հեռու է մոտ 380000 կիլոմետր, այսինքն Երկրի շրջանագծից միայն $9\frac{1}{2}$ անգամ ավելի: Նույնիսկ մինչև ինքնաթիւների գուտը կային շատ մարդիկ, որոնք իրենց կյանքում Երկրի վրա ավելի շատ կիլոմետրեր էին անցել, քան Երկրից՝ մինչև Լուսինը եղած կիլոմետրների քանակը:

Քանի որ Լուսինը այդքան մոտիկ է Երկրին, նրան կարելի է շատ լավ զիտել հեռադիտակով: Դիտումները ցույց են տվել, որ Լուսինն ինքը լույս չի տալիս այնպես, ինչպես լույս է տալիս Արեգը: Լուսնի մակերնույթը մոտավորապես այնպես է, ինչպես Երկրի անապատային հարթավայրերի մակերնույթը: Լուսնի այդ հարթավայրերում ցրված են բաղմաթիվ լեռներ, որոնք մեծ մասամբ նման հն իւասնարանների (կրատերների), բայց չկան ոչ ծովեր, ոչ գետեր, ոչ բուսականություն: Վերջինը չի էլ կարող լինել. Լուսնի վրա օդ չկա, հետևաբար կյանք էլ չկա:


Լուսինը բոլորվում է Երկրի շուրջը և մի բոլորումը կատարում է համարյա մեկ ամսում: Ու քանի որ Երկիրն անշարժ չէ, այլ տարձա ընթացքում մի պտույտ է գործում Արևի շուրջը, ուստի Լուսինն էլ Երկրի հետ մասնակցում է այդ շարժմանը:

4. ԵՐԿԻՆԱՅԻՆ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐ

Պարզ անլուսին-գիշերը այնքան էլ շատ աստղեր չեն երևում, ինչպես սովորաբար կարծում են շատերը: Ամենասուր տեսողություն ունեցող մարդիկ առանց հեռադիտակի ու Երկդիտակի (բինոկուլի) երկնակամարում տեսնում են ոչ թե միլիոնավոր աստղեր, այլ ընդամենը երկու-երեք հազար: Իսկ ամբողջ երկնքում, որը բոլոր կողմերից շրջապատում է Երկիրը, հասարակ աշխով տեսանելի աստղերը վեց հազարից ավելի չեն: Նրանք բոլորն էլ արդեն վագուց հաշված ու գրանցված են հատուկ ցացակներում: Այդ անելն այնքան էլ գմբար չէ, որովհետեւ աստղերը միմյանց նկատմամբ ունեցած իրենց դիրքերը համարյա թե չեն փոխում:

Դրանում համոզվելու համար աստղային երկնքում ընտրենք մի փոքրիկ տարածություն, ամենից լավ է այնպիսին, որը աստ-

Ղերը մի որևէ նկատելի ֆիգուրա են կազմում։ Այդպիսի ֆիգուրաների վրա մարդիկ շատ վաղաց են ուշադրություն դարձրել։ Նրանց համաստեղություններ են անվանում։ Նկարենք այդպիսի ֆիգուրաներից մեկը, կազմենք, ինչպես անում են, այդ համաստեղության քարտեզը։ Եթե այդ քարտեզը ուշադրությամբ է կազմը ված, ապա այն ճիշտ կմնա երկար ժամանակով։ Տասնյակ տարիներից հետո մենք համաստեղությունը կտեսնենք այնպիսի միջակում, ինչպես այն տեսել էինք առաջին անգամ։ ոչ մի աստղիկ չի կորչի, ոչ մեկը իր տեղից հեռացած չի լինի։ Միայն թե ամբողջ համաստեղությունը կարող է գտնվել երկնքի ո՛չ այն կողմում, ուր



Նկ. 3. Մեծ Արջի համաստեղության օրուգիշերվա շարժումը։

գտնվում էր առաջ։ Նույնիսկ կարող է պատահել, որ մենք այն բրւլորպիխն էլ չենք գտնի, որովհետեւ շատ համաստեղություններ հագում են ու մայր մտնում երկնքի երկութական (թվացող) պտույտի հետևանքով։

Եթենքի այդ թվացող պտույտը տեղի է ունենում ճիշտ այնպես, ինչպես իրականում պտույտը է մեր երկիրը, — միայն թե հակառակ կողմքը։ Այս պատճառով էլ երկնքում, ինչպես և երկրագոնդի վրա, կան երկու անշարժ կետեր, երկու բևեռ, որոնց շուրջը

կարծես թե պտտվում են բոլոր աստղերը՝ որ ու գիշերվա ընթացքում: Երկրի հյուախային կիսագնդում երևում է միայն հյուախային երկնային բևեռը: Բուն բևեռում ոչ մի աստղ չկա, բայց նրան շատ մոտիկ գտնվում է բավական պայծառ մի աստղ, որը գրահամար էլ բևեռային աստղ են անվանում: Նրան հեշտությամբ կարելի է գտնել Մեծ Արջի համաստեղության օգնությամբ, ինչպես ցույց է տալիս Յ-րդ նկարը: Բնեռային աստղը թվում է համարյա անշարժ և կողմնացույցից ավելի ճիշտ է՝ ցույց տալիս հյուախի ուղղությունը, իսկ մնացած աստղերը կարծես թե շարունակ պտտվում են նրա շուրջը:


Եթե նույնիսկ այն մարդիկ, որոնք ապրել են 2—3 հազար տարի առաջ, հիմա կարողանացին նայել երկնքին, նրանք համաստեղությունների ուրվագծերում նկատելի տարրերություն չեն գտնի: Այս պատճառով էլ աստղերը արդեն վաղուց անվանվել են անշարժ աստղեր: Հետագայում, երբ մենք կովաստմենք, թե ինչ բաններ են աստղերը, մենք կտեսնենք, որ իսկապես ասած՝ այդ անոնքը ճիշտ չէ:

Բայց կան մի քանի, այն էլ շատ պայծառ աստղեր, որոնք նույնիսկ հնադարյան ժամանակներում անշարժ աստղեր չեն անվանվում: Եթե այդպիսի մի աստղ նշենք աստղերի քարտեզի վրա, ապա մի քանի ամսից հետո, երբեմն էլ մի քանի օդից հետո նա կլինի ուրիշ աստղերի մեջ, ուրիշ համաստեղության մեջ, իսկ նրան մինչ այդ շրջապատած բոլոր աստղերը կմնան իրենց տեղերում (նկ. 4): Այդպիսի աստղերը մոլորակներ են կոչվում, հունարեն—պլանետա, որ նշանակում է թափառող աստղ: Հասարակ աշխով կարելի է տեսնել միայն հինգ մոլորակ: Մենք հիմա գիտենք, որ բոլոր մոլորակներն էլ շատ ավելի մոտիկ են աստերից, բայց շատ ավելի հեռու են, քան լուսինը:

Որպեսզի թվենք այն բոլոր լուսատուները, որոնք կարելի է տեսնել երկնքում, մեզ մնում է ճիշտակել նաև գիսավոր և վայր ընկնող աստղերը: Դիսավորը լուսավոր մշուշով շրջապատված աստղի տեսք ոմիք նա ունենում է մի առանձին հավելուկ—պոչ: Դիսավոր աստերը, ինչպես և մոլորակները, անցնում են մի համաստեղությունից մյուսը, բայց հազվադեպ են երևում, և ըն-

Ուրցողների մհծամասնությունը ամենայն հավանականությամբ նրանց երրեք էլ չի տեսել:

Ընդհակառակը, ընկնող աստղերը բոլորին էլ հայտնի են: Դրանք միայն անունով են աստղեր, իսկական աստղերի հետ



Նկ. 4. Մարս մոլորակի շարժումը Աղեղնա վորի և Ածեղյուրի համատեղություններով, 1939 թ. մայիսից մինչև հոկտեմբերը:

նրանք ոչ մի ընդհանուր բան չունեն: Աստղերը՝ վիթխարի, շափականց հեռավոր, ինքնալուսավորվող մարմիններ են, հեռավոր արեներ են մեր Արեի նման: Նրանք երբեք և ոչ մի տեղ չեն ընկնում, չեն անհետանում: Իսկ ընկնող աստղերը սոսկ քարակտորներ կամ նույնիսկ ավագահատիկներ են, որոնք հսկայական քանակությամբ սլանում են տիեզերական օդազուրկ տարածության մեջ: Քանի դեռ այդ ավագահատիկները թոշում են Երկրից հեռու տեղերում, նրանք սառն ու մթին նն լինում և մենք չենք իմանում նրանց գոյության մասին: Իսկ եթե այդպիսի քարակտորներից որևէ մեկը հանդիպում է Երկրին, մեր մթնոլորտի մեջ է թոշում մի վայրկյանում մի քանի տասնյակ կիլոմետր արագությամբ, շատ ավելի արագ, քան թոշում է Հրետանային արկը: Հայտնի է, որ արկն իր թոփշքի ժամանակ տաքանում է օդին շփմբելուց: Երկնային արկերը, որոնք թոշում են մեր մթնոլորտի մեջ, շատ ավելի ուժեղ են տաքանում: Եթեկանալով, նրանք վայրկենապես հալվում են գաղ-

են դառնում մեծ քարձրության վրա, ամպերից էլ շատ ավելի քարձր: Այդ ժամանակ մարդիկ ասում են՝ «Այ, ասող ընկավ»: Միայն այն դեպքում, եթե քարը բավականաշափ մեծ է, մթնոլորտի միջով թոշելու ժամանակ ամբողջովովն չի այրվում, նոր բեկորները հասնում են երկրի մակերեսին և լրագրերում կարող է լուր հաղորդվել, թե այսինչ վայրում «օդաքար» («մետեորիտ») ընկավ:

1. ԱՐԵԳԱԿՆԱՑԻՆ ՍԻՍՏԵՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. ՄՈԼՈՐԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՇԱՐԺՈՒՄԸ

Մոլորակների շարժումն աստղերի միջև՝ երկար ժամանակ հանելում է եղել գիտնականների համար: Իրեն օրինակ՝ նկարագրենք, թի ինչպես է շարժվում Յուպիտեր անունով պայծառ մոլորակը: Յուպիտերի գլխավոր շարժումն այն է, որ նա աստղերի միջև դանդաղ ընթանում է արևմուտքից արևելք կամ աջից ձախ: 1944 թվականին նա երկնքի այն տեղամասում էր գտնվում, որը կոչվում է Առյուծի համաստեղոլություն, այդ համաստեղության հետ միասին ծագում էր ու մայր մտնում: 1945 թ. նա արդեռ շարժվում է նրանից դեպի արևելք գտնվող Կույսի համաստեղության աստղերի միջև: 1946 թ. նա անցնում է էլ ավելի դեպի արևելք, Կշեռքի համաստեղոլություն և այլն: Իսկ 1956 թ. մենք կտեսնենք, որ Յուպիտերն աստղային եղինքում յուրատեսակ աշխարհաշուրջ ճահճապարհորդություն է կատարել. տասերկու տարվա ընթացքում լրիվ շրջան է գծել ու էլի գտնվում է Առյուծի համաստեղությունում: Ամենազարմանալին այն է, որ Յուպիտերը միշտ չէ, որ շարժվում է դեպի մեկ կողմ, արևմուտքից արևելք: Յուրաքանչյուր տարի մի քանի օրով նա կարծես կանգ է առնում, հետո էլ սկսում է ընթանալ ետ, դեպի արևմուտք, և շորս ամիս շարժվում է այդպիսի «հետին ընթացքով»: Հետո էլի կանգ է առնում, հետո էլ ուին ամիս նորից «ուղիղ» ընթանում է մինչև հետևյալ կանգառումը:

Նույնպիսի կանգառումներով և վերադարձերով են շարժվում նաև մյուս մոլորակները, միայն թե դրանցից մի քանիսը Յուպիտերից ավելի արագ են լրիվ շրջան կատարում, մյուսները — ավելի դանդաղ: Ճնադարյան որոշ ժողովուրդներ այդ մշտական վերադարձերը սոսկ նրանով էին բացատրում, թե մոլորակները գիշերա-

չին մթության մեջ ստեղ-ստեղ կորցնում են իրենց ճանապարհը։ Հետո ի հարկե սկսեցին ուրիշ, մաթեմատիկական բացատրություններ տալ մոլորակների հետադարձ շարժումներին։ Բայց և այնպես, այդ բացատրություններն էլ խիստ բարդ և անհամոզիշ էին։ Միայն Կոպերնիկոսը ճիշտ և շատ պարզ բացատրեց մոլորակների բարդ շարժումները։ Ըստ նրա բացատրության, մոլորակները բոլորվում են ոչ թե Երկրի շուրջը, ինչպես նրանից առաջ մտածում էին ուրիշները, այլ Արևի շուրջը։ Երկրի շուրջը միայն կուտանքն է բոլորվում։ Ընդ ամին բոլոր մոլորակներն էլ ամբողջ ժամանակ շարժվում են դեպի մի կողմ, արևմուտքից արևելք, առանց կանգ առնելու և վերադառնալու։ Եթե կարելի լիներ Արևից նայել, թե ինչպես է շարժվում, օրինակ, Յուպիտերը, ապա մենք կտեսնեինք, որ նա ամբողջ ժամանակ շարժվում է միայն դեպի արևելք, ինչպես կուտանքն Երկրի շուրջը։ 12 տարվա ընթացքում Երկնքի վրա լրիվ շրջան է կատարում և վերադառնում նույն համաստեղությունը, ուր եղել է 12 տարի առաջ։ Բայց մենք Յուպիտեր մոլորակին նայում ենք Երկրի վրայից, որն ինքն էլ մոլորակ է, ինքն էլ բոլորվում է Արևի շուրջը նույն ուղղությամբ, ինչպես և մնացած մոլորակները։ Դրանից է, որ Յուպիտերի շարժումը մեզ ավելի բարդ է թվում, քան թե կա իրականում։ Զի՞՞ որ եթե Յուպիտերը բոլորվիմ էլ շշարժվեր, մինույն է, մեզ կթվար, թե նա շարժվում է։ Հիրավի, Երկիրը բոլորվում է Արևի շուրջը և մի տարուց հետո վերադառնում առաջվատեղը։ Բայց մենք Երկրի շարժումները շենք նկատում, մեզ թվում է, որ ոչ թե մենք, այլ Յուպիտերն է շարժվում, մենք տեսնում ենք, որ նա կես տարի շարժվում է դեպի առաջ (դեպի արևելք), հետո էլ կես տարի—դեպի ետ (դեպի արևմուտք), և մի տարուց հետո վերադառնում է առաջվատեղը։ Յուպիտերը, բացի դրանից, ինքն էլ է բոլորվում Արևի շուրջը, միայն թե Երկրից շատ ավելի դանդաղ։ Այդ շարժումը մենք նույնպես տեսնում ենք, դա, այսպես ասած, գումարվում է այն շարժման հետ, որը առաջանում է Երկրի շարժումից, և այդ եղանակու շարժումները պարզաբանելն այնքան էլ հեշտ չէ։ Այդ դժվարին խնդիրը լուծեց Կոպերնիկոսը, որի համար, ամենայն իրավամբ, նրան մեծ գիտնական են համարում։

Բայց եթե Երկիրը բոլորվում է Արևի շուրջը, ապա ինչո՞ւ միայն մոլորակների նկատմամբ ենք մենք տեսնում այդ տարեկան

շարժումը դեպի առաջ ու հայտ, իսկ աստղերի վերաբերյալ այն ոչ
Այստեղ գեր է խաղում հեռավորությունը: Երբ մենք գնում ենք
դիցուկ երկաթուղու գնացքով կամ թոշում ենք ինքնաթիռով, մեզ
թվում է, թե բոլոր առարկաները շարժվում են հակառակ՝ ուղղու-
թյամբ: Ընդ սմին-որբան հեռու է առարկան, այնքան դանդաղ է
շարժվում դեպի հայտ, իսկ շատ հեռավոր առարկաներն էլ, կարելի
է առել, բոլորովին շեն շարժվում, երկար ժամանակ մենք նրանց
տեսնում ենք միևնույն ուղղությամբ:

Այդպես էլ աստղերը: Նրանց մեծամասնությունն այնքան
հեռու է գտնվում, որ կարելի է ասել՝ Արևի շուրջը մեր բոլորվելուց
նրանք բոլորովին էլ շեն շարժվում: Կոպերնիկոսի մահից միայն
երեք հարյուր տարի հետո շատ ճշգրիտ աստղաբաշխական շա-
փումների միջոցով հաջողվեց նշել ամենամոտիկ մի քանի աստղե-
րի տարեկան տեղաշարժները: Այս հայտնագործությունը վերջնաշ-
կանապես ապացուցեց Կոպերնիկոսի ուսմունքի ճշտությանը:


2. ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ

Մենք արդեն գիտենք, որ մեր երկիրը բոլորվում է Արեի շուրջ-
ը: Այս պատճառով էլ կարելի է ասել, որ երկիրը նյա մոլորակ-
ներից մեկն է: Թեպես մոլորակներն աստղերի տեսք ունեն, բայց
իրականում նրանք երկրին ավելի շատ են նման, քան աստղերին: Աստղերը հեռավոր արեգակներ են, վիթխարի, շիկացած, ինքնա-
լուսավորող մարմիններ: Իսկ մոլորակներն աստղերից շատ ավելի
փոքր են և խավար, այսինքն ո՛չ լուսատու մարմիններ են ինչպես
մեր Երկիրը և Լուսինը: Մենք մոլորակները տեսնում ենք միայն
այն հանգամանքի շնորհիվ, որ Արեը լուսավորում է նրանց: Ահա
թե ինչու սովորաբար ասում են, որ մոլորակները լուսավորվում են
Արեի անդրադարձող լուսով: Մեր Երկիրն էլ է անդրադարձնում
Արեի լուսը, այս պատճառով էլ նա պետք է, որ տեսանելի լինի
մյուս մոլորակներից: Մեր հարեւան Մարտ մոլորակի վրայից Երկի-
րը պետք է որ թվա նույնապես պայծառ, ինչպես Երկիրը մեզ թվում
է Յուպիտեր:

Բոլոր մոլորակներն Արեի հետ միասին ասես թե մի ընտանիք
են կազմում: Այս ընտանիքը կոչվում է՝ արեգակնային սիստեմ՝

(Համակարգություն), որովհետև Արեք բոլոր տեսակետերից այդ քննանիքի գլխավոր անդամն է:

Արեք շատ ավելի մեծ է բոլոր մոլորակներից: Նրա տրամագիծը 109 ու կես անգամ ավելի մեծ է Երկրի տրամագծից: Պարզության համար եթե պատկերացնենք, որ Արեք ձմեռուկ է, ապա Երկրը գորեկի հատիկի չափ փոքր կլինի: Կան Երկրից փոքր մոլորակներ,



Նկ. 5. Արեք և մոլորակների համեմատական չափսերը:

կան նաև նրանից մեծերը, բայց եթե բոլոր մոլորակները իրաք կզցնենք և մի գունդ դարձնենք, ապա այդ գնդի տրամագիծը համարյա ինն անգամ փոքր կլիներ Արևի տրամագծից (նկ. 5):

Գիտնականները կարողանում են ոչ միայն շափել երկնային լուսատունները, այլև կշռել նրանց (ի՞հարկե մաթեմատիկական հաշվումների օգնությամբ): Թե ինչպես պետք է այդ անել, Կոպերսիկոսից հարյուր հիսուն տարի անց դա ցուց տվեց մի ուրիշ ժիշտ գիտնական,—Նյուտոնը:

Մենք հիմա գիտենք, թե քանի տոննա կտացվեր, եթե մենք կշռենք կշռենք Լուսինը: Գիտնականները նաև հաշվել են, թե ինչքան են կշռում մոլորակները, այդ թվում նաև մեր Երկիրը և նույնիսկ Արևը: Բանից գուրս եկավ, որ Արևի կշիռը (կամ ավելի ճիշտ ասած՝ դանգվածը) մոտավորապես յոթ հարյուր անգամ ավելի է միասին վերցրած բոլոր մոլորակների կշռից (կամ զանգվածից) և ավելի քան Երեք հարյուր հազար անգամ ավելի է Երկիրի զանգվածից:

Վերջապես, արեգակնային սիստեմի բոլոր մարմիններից միայն Արևն ունի իր սեփական լույսն ու շերժությունը: Բոլոր մոլորակները և նրանց արբանյակները սառն և խավար գնդեր են, նրանք տաքությունն ու լույսը միայն Արևից են ստանում: Երկրի վրա ամբողջ կյանքը գոյություն ունի միայն Արեգակի ճառագայթ-ների շնորհիվ:

3. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Երկրի վրա մենք չենք տեսնում այնպիսի շարժուածներ, որոնք նման լինեն մոլորակների և նրանց արբանյակների շարժուածներին: Այս պատճառով էլ նույնիսկ Կոպերնիկոսի հայտնաբերումից հետո դեռ Երկար ժամանակ գոյություն ուներ այն կարծիքը, թե Երկնային մարմինները շարժվում են մեխանիկացի ո՛չ այն կանոնների կամ ինչպիս ասում են՝ օրենքների համաձայն, որոնցով տեղի են ունենում շարժուածները Երկրի վրա: Կարծում էին, թե Երկնային տարածության մեջ գործում են ինչ-որ առանձին օրենքներ, որոնք գուցե և առմիշտ անհասկանալի մնան մարդկանց համար: Միայն 1687 թվականին Նյուտոնը բացատրեց Երկնային մարմինների շարժուածը և այն էլ շափազանց պարզ: Նա ցուց տվեց, որ Երկնային մարմինները շարժվում են հենց այն կանոնների համաձայն, որոնցով

շարժվում են առարկաները Երկրի վրա, որ ամբողջ Տիեզերքում մեխանիկայի օրենքները միևնույն են:

Մենք մեզ այսպիսի մի հարց տանք. եթե տիեզերական օդագուրկ տարածության մեջ, Երկրից և Արևից հեռու որևէ տեղում կրակենք թնդանոթից, ապա ի՞նչպես կթոշի արկը: Արդյոք նա կանգ չի առնի, որովհետև ոչ մի բանի չի բաղխափ: Կամ թերեւ նա կանգ կառնի աստիճանաբար, ինչպես կանգ է առնում գունդը, եթե այն գլորենք հարթ հատակին: Բայց գունդը կանգ է առնում հատակին շփվելուց և օդի դիմագրությունից: Իսկ եթե շփում և դիմագրությունը մինե՞ր: Այդ գեպքում գունդը բնա՛վ կանգ չէր առնի, շարունակ կգործեր միատեսակ արագությամբ, կամ ինչպես ասում են՝ հավասարաշափ: Ակներև է, որ արկն էլ օդագուրկ տարածության մեջ պետք է շարժվի հավասարաշափ, շփուելով իր արագությունը:

Արդյոք մեր արկն ուզի՞վ, թե՞ կոր գծով կթոշի: Եթե կրակենք Երկրի վրայից կամ նրան մոտիկ տեղից, ապա արկն իհարկե կոր գծով կընկնի Երկրի վրա և անկման արագությունը շարունակ կավելանա: Ինչո՞ւ Որովհետև Երկրը, ինչպես ասում են, գեպի իրեն է ձգում արկը: Բայց եթե կրակոցը տեղի է ունեցել օդագուրկ տարածության մեջ, Երկրից և մյուս տիեզերական մարմիններից շատ հեռու, ապա այնտեղ թոշող արկը ոչ մի կողմից և ոչ մի ձգողություն դրենի չի գտա. այս պատճառով էլ նա ոչ մի կողմ էլ չի շեղվի, ամբողջ ժամանակ կթոշի ուղիղ գծով և շարունակ միևնույն արագությամբ:

Կարելի է ասել, որ մոլորակներն իրենցից ներկայացնում են այդպիսի արկեր՝ թոշելով օդագուր տարածության մեջ: Բայց ինչո՞ւ նրանք ուղիղ գծով չեն թոշում: Որովհետև, — պատասխանեց Նյուտոնը, — կա մի պատճառ կամ ուժ, որը շարունակ մոլորակին շեղում է նրա ուղիղ ճանապարհից: Նյուտոնը մաթեմատիկական հաշիվների միջոցով ապացուցեց, որ այդ ուժը մշտապես շեղում էրամ քաշում է մոլորակը Արևի ուղղությամբ, որ դա Արևի ձգողության ուժն է: Հենց այս է Նյուտոնի մեծ հայտնագործությունը:

Ոչ միայն Երկիրն է գեպի իրեն քաշում առարկաները, այլև Տիեզերքի բարս առարկաները, բոլոր մարմինները ձգում են միմանց: Մարմինների միջև ձգողությունն այնքան ուժեղ է, որքան

մեծ են մարմինների զանգվածները, այսինքն որքան դրանք մեծ և հզո՞ծ են և որքան մոտիկ են միմյանց: Մեզ շրջապատող բոլոր առարկաները, օրինակ, սենյակի առարկաները ձգում են իրար, ձգում են մեղ, մենք էլ մեր հերթին ձգում ենք նրանց: Բայց մենք այդ բոլոր ձգողությունները չենք նկատում, որովհետև մեզ մոտիկ է գտնվում ձգողության անհամեմատ ավելի մեծ ուժ ունեցող մի մարմին. այդ մեր Երկիրն է և միայն նրա ձգողությունն է երևում բոլոր մարմինների նկատմամբ: Այդ ձգողության ուժը մարմնի կշիռն է:


Զգողության ուժը գործում է ամբողջ Տիեզերքում և այս պատճառով այն անվանում են տիեզերական ձգողություն: Հասած խընձորը ընկնում է ծառից, որովհետև նրան ձգում է Երկիրը: Լուսինը պատվում է Երկրի շուրջը և ոչ թե ուղիղ գծով թռչում, որովհետև նրան պահում է Երկրի ձգողությունը: Բոլոր մոլորակները, այդ թվում նաև մեր Երկիրը, չեն թռչում-հեռանում անսահման տարածության մեջ, որովհետև Արեգակն իր ձգողությամբ նրանց շեղում է իրենց ուղիղ ճանապարհոց և ստիպում է մշտապես բոլորին իր շուրջը:

4. ՄՈԼՈՐԱԿՆԵՐԻ ԵԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արեին ամենամոտիկ մոլորակը Մերկուրիս է կոչվում: Նա չունից միայն մի քիչ է մեծ: Ինչպես երեսում է Երդ նկարից, Մերկուրիսի ուղեծիրը շատ ավելի փոքր է Երկրի ուղեծիրից և նա իր ուղեծիրով ավելի արագ է թռչում, քան Երկիրը, այնպես որ այս մոլորակը Արեգակի շուրջն իր լրիվ բոլորումը կատարում է երեք ամսաց էլ քիչ ժամանակամիջոցում:

Մերկուրիուսի վրա հազիվ թե կյանք լինի: Հեռադիտակներով Մերկուրիուս դիտելով, աստղաբաշխները հանգեցին այն հետեւթյան, որ նրա վրա ցերեկվա ու գիշերվա հերթափոխում չի լինում: Այս մոլորակի մի կիսագունդը ամբողջ ժամանակ դարձած է դեպի Արելը, այնուեղ մշտական ցերեկ է և մշտական ամառ: Մյուս կիսագունդն ընդհակառակը, երբեք չի տեսնում Արելը, այնտեղ մշտական գիշեր է և մշտական ձմեռ: Հասկանալի է, որ գիշերային այդ կիսագունդը այնպիսի բույսեր և կենդանիներ, ինչպիսիք կան մնար Երկրի վրա, ապրել չեն կարող: Բայց նրանք չեն կարող ապրել նաև

մասս, ցերեկացին կիսագնդում, որովհետև դա համարյա թե շիկացած է երբեք մայր շմտնող Արևի ճառագայթներից. շմոռանանք, որ Մերկուրիուր երկու և կես անգամ ավելի մոտիկ է Արևին, քան Եր-



Նկ. 6. Արեգակնային սիստեմի պլանը (Պլուտոն մոլորակը, որը պետք է լիներ նեղութունի հետևում, պլանի վրա չտեղափորվեց):

Կիրը: Բացի դրանից, Մերկուրիուր չուցը, ինչպես և Լուսնի չուցը, մթնոլորտ չկա, որն անհրաժեշտ է կենդանի էյակների շնչառության համար:

Մերկուրիուր տեսնել շատ դժվար է, որովհետև նա երկնքում միշտ էլ Արևին մոտիկ է լինում և հավանորեն այս գրքույկի ընթերցողների մեծամասնությունը նրան ոչ մի անգամ շի տեսել: Հար-

կավոր է վաղօրոք հաշվել, թե ո՞ր օրերին նա երկնքում այնպիսի դիրք կունենա, որը հարմար է դիտումների համար, և այն ժամանակ 7—10 օրվա ընթացքում նրան կարելի է հեշտությամբ գտնել վերջալուսի կամ արշալուսի ճառագայթներում, որովհետև նա շատ պայծառ է: Բայց այդ հաշիվը կարելի է անել իհարկե միայն հատուկ գրքույկների, օրինակ, աստղաբաշխական օրացույցի օգնությամբ: Գիշերային մութ երկնքում մենք Մերկուրիոսը երբեք չենք տեսնում:

Իրեկից իր հեռավորությամբ Մերկուրիոսից հետո գալիս է Վեներա մոլորակը, բոլորին հայտնի երեկոյան ու առավոտյան աստղը: Սա ամբողջ երկնքի ամենապայծառ աստղն է: Վեներան Արևի շուրջը պտտվում է $7\frac{1}{2}$ ամսում: Տարվա մեծ մասում նա երկնքում դտնվում է Արևին մոտիկ, այս պատճառով նրան դիտելը դժվար է: Այնուհետև կարելի է միքանի ամսվա ընթացքում նրան տեսնել սկզբում իբրև երեկոյան աստղ արևմուտքում, հետո իբրև առավոտյան աստղ— արևելքում: Թեպես նա Արևից շատ պեկի հեռու է, քան Մերկուրիոսը, այնուամենայնիվ ուշ գիշերը, օրինակ, մոտ կես գիշերին նրան հազվագույտ դեպքերում կարելի է տեսնել: Վեներան այնքան պայծառ լույս է տալիս, որ դժվար չէ նրան տեսնել նույնիսկ ցերեկը, Արևի լիառատ լույսով, միայն թե հարկավոր է վաղօրոք դիտենալ երկնքի այն տեղը, ուր գտնվում է նա:

Իր մեծությամբ Վեներան համարյա հավասար է Երկրին: Վեներայի վրա պետք է որ ավելի շոգ լինի, քան Երկրի վրա, բայց ոչ այնքան շոգ որքան Մերկուրիոսի վրա: Վեներան, ինչպես և Երկրը, շրջապատված է մթնոլորտով: Սակայն առայժմ անկարելի է որոշակի կերպով ասել, թե արդյոք կյանք կա՝ այս մոլորակի վրա: Հենց այն մթնոլորտը, որը մեզ հիմք է տալիս ենթադրելու, թե Վեներայի վրա կյանք կա, մեղ խանգարում է գեթ որևէ քան տեսնելու նրա վրա: Հեռադիտակով նայելիս Վեներայի մակերեսը երևում է շատ պայծառ, բոլորպին հարթ, սպիտակ, առանց բծերի: Ակներին է, որ դա բուն իսկ մոլորակի պինդ մակերեսուցիթը չէ, այլ նրա գազային պատյանն է, մթնոլորտը: Այդ մթնոլորտը մշտապես լցուն է ինչ-որ անթափանցիկ զանգվածներով, ամպերով կամ մեղերով, որոնք մեզ խանգարում են Վեներայի մակերեսուցիթը դիտելու Այս պատճառով էլ տվյալ մոլորակի բնության մասին մինչև այժմ ոչինչ

Հայտնի չէ: Մենք նույնիսկ շփմանք, թե նա ինչքան ժամանակում է պատվում իր առանցքի շուրջը, այսինքն նրա վրա որքան ժամանակ են տևում ցերեկն ու գիշերը: Գիտնականները նորերս պարզել են, որ վեներայի մթնոլորտում շատ ածխաթթու է պարունակվում, բայց մինչև հիմա էլ վեներայի վրա չի հայտարերված: մաքուր թթվածին, առանց որի երկրի վրա կյանք չի կարող լինել:

Արենից իր հեռավորությամբ երրորդ տեղն է բռնում մեր Երկիրն իր արբանյակ կուանի հետ: Հետո գալիս է շորրորդ մոլորակը—Մարսը, որի մասին մենք շատ ավելի քան գիտենք, քան Վեներայի ժամին: Մարսը Արենից մեկ և կես անգամ ավելի հեռու է, քան Երկիրը, և իր ուղիծիրով ավելի դանդաղ է թոշում, քան Երկիրը: Դրա համար էլ Արենի շուրջը նրա կատարած պտույտը, այսինքն նրա «տարին» մեր համարյա երկու տարվա շափ է տեսաւ: Յուրաքանչյուր երկու տարին մի անգամ Մարսը մոտենում է Երկրին և այդ ժամանակ միջին հաշվով երկու անգամ ավելի մոտիկ է լինում մեզ, քան Արենը: Մեր Երկրին մոտենալու ժամանակ մի քանի շաբաթվաքնիշտում նա լինում է երկնքի ամենապայծառ աստղերից մեկը և աշքի է ընկնում իր կարմիր գույնով:

Մարսը Մերկուրիի մեծ է, բայց Երկրից փոքր է. նրա տրամագիծը Երկրի տրամագիծից համարյա երկու անգամ փոքր է: Աւելի հեռադիտակով Մարսը երկում է իրեն կարմրավուն-դեղին փոքրիկ

կլորակ, որի վրա բծեր են նը-կատվում (նկ. 7), ինչպես Հուանի վրա: Այդ բծերը չեն փոխում իրենց տեսքը, բայց ամբողջ ժամանակ շարժվում են մոլորակի սկավառակի վրա: Այդ նշանակում է, որ Մարսը պտտվում է իր առանցքի շուրջը, ինչպես մեր Երկիրը: Պարզվել է, որ Մարսը իր առանցքի շուրջը պտտվում է (մեկ անգամ կատարած պտույտ—Մարսի օր ու գիշերը) ընդամենը միայն 40 րոպեով ավելի ժամանակամիջոցում, քան Երկրին իր առանցքի շուրջը:

Նկ. 7. Ինչպես է երեսում Մարսը
աւելի հեռադիտակով:

Այնուհենանդերձ Մարսի պտույտի առանցքն էլ համարյա հաւաքնակես թեք ուղղություն ունի, ինչպես և Երկրի առանցքը, այն-



որս որ նրա վրա էլ պետք է լինեն տարվա այնպիսի եղանակներ՝ ինչպես մեղ մոտ. միայն թե այնտեղ տարվա յուրաքանչյուր եղանակը համարյա երկու անգամ ավելի է տեռամ, քան երկրի վրա, որովհետև Մարսի տարին երկու անգամ երկար է երկրի տարուց եք առա հեռադիտակով երեսում է, որ իրոք, Մարսի մերթ հյուսիսային, մերթ հարավային կիսագնդում լինում է մերթ ձմեռ և մերթ ամառ Մարսի այն մարզերում, որոնք պետք է որ ամենացուրտ մարզերը լինեն, նկատվում է երկու սպիտակ բիծ, մեկը մյուսի դիմաց. մեկը գտնվում է հյուսիսային, մյուսը հարավային բների շուրջը: Այս բժերը հերթով մերթ մեծանում են, մերթ փոքրանում: Օրինակ, երբ Մարսի հյուսիսային կիսագնդում ձմեռ է, հյուսիսային բնեռային բիծը մեծանում է, իսկ հարավայինը ընդհակառակը, փոքրանում ու վերջապես, բոլորովին չքանում է, այնտեղ այդ ժամանակ ամառ է: Որոշ ժամանակից հետո բիծը սկսում է անհետանալ, նշանակում է հյուսիսային կիսագնդում վրա է հասնում գարունը. Հարավային կիսագնդում այդ ժամանակ աշուն է, և բնեռային բիծն այնտեղ մեծանում է: Այս հետաքրքիր երեսուցիներն ապացուցում են, որ Մարսի վրա չուր կա: Բեերի շուրջը եղած սպիտակ բժերը ձյուն ու սառուցներ են, ինչպես նաև ամպերի կուտակումներ: Դրանք աշնանը աճում են և գարնանը հալլում: Եթե որևէ մեկը մի ուրիշ մոլորակից նայի մեր երկրին, նա վերջինիս երկու բևեռների շուրջը կտեսնի նույնպիսի սպիտակ գլխարկներ: Տարբերությունը միայն այն է, որ երկրի վրա այդ գլխարկները երբեք շեն անհետանում՝ բոլորովին, ամառը դրանք միայն փոքրանում են: Սրանից կարելի է եղբակացնել, որ Մարսի վրա ավելի քիչ չուր և հետևաբար ավելի քիչ սառուցյա կա, քան երկրի վրա: Ահա թե ինչու ամառը այնտեղ բնեռային գլխարկները — ձույնն ու սառուցը կարող են բոլորովին հալլել, թեպետև Մարսի վրա ավելի ցուրտ է, քան երկրի վրա:

Մարսի մակերեսուցին եղած մթին բժերը առաջ ծովեր էին համարվում: Բայց հիմա մենք գիտենք, որ Մարսի վրա չկան ոչ ծովեր, ոչ էլ նույնիսկ մեծ լճեր: Մոլորակի կարմրավուն-դեղին մակերեսովը — դա Արեգ խանձված քարքարոտ կամ ավազոտ անապատ է, իսկ մթին բժերը — ավելի խոնավ տեղեր, որոնք գուցե և բռականությամբ են ծածկված: Եթե Մարսի վրա չուր կա, ապա պետք է որ օդ էլ լինի, որովհետև օդազուրկ տարածության մեջ չուրն իս-

Կույն ամբողջովին կգոլորշիանար: Եվ իսկապես, Մարսի վրա կա մթնոլորտ, բայց ոչ այնքան խիտ, ինչպես Երկրի վրա: Բացի դրանից, այնտեղի մթնոլորտը ավելի չոր է, քան Երկրի մթնոլորտը, նրա մեջ շատ ավելի քիչ են ջրային գոլորշիները: Այդ երևում է նրանից, որ Մարսի վրա շատ հազվագյուտ գեպքերում են ամպեր լինում: Հեռադիտակով նրանց կարելի է տեսնել իբրև փոքրիկ, սպիտակ քծեր, որոնք լողում են մոլորակի մակերեսին:

Գիտնականներին հաջողվել է պարզել, որ Մարսի մթնոլորտի մեջ թթվածին կա, բայց մոտավորապես հազար անգամ պակաս, քան մեր մթնոլորտում: Առօսասարկ Մարսի հենց մակերեսի մոտ մթնոլորտն ավելի նոսր է, քան Երկրի ամենաբարձր լեռների գագաթների վրա: Հաջողվել է մոտավորապես շափել նաև Մարսի վրա եղած ջերմաստիճանը: Պարզվել է, որ մոլորակի մակերեսը ցերեկով Արենի հառագայթներից տաքանում է մինչև 10 աստիճան, բայց երբ Մարսի վրա գիշեր է, թե ձմռանը և թե ամառը ջերմաստիճանը շատ շուտով ընկնում է մինչև 70 աստիճան ցրտի: Երկրի վրա այսպիսի ցուրտ հազվագյուտ գեպքերում է լինում նույնիսկ բևեռային մարդերում: Այսպիսով Մարսի կլիման պետք է անհարմար համարել երկրային բույսերի և կենդանիների համար: Եթե այնտեղ կենդանի էջակներ կան, ապա դրանք պետք է, որ տարբերեն Երկրի քնակիշներից:

Մարսի շուրջը բոլորվում են երկու արբնյակներ, երկու փոքրիկ լուսին, ցուրաքանչյուրը ոչ ավելի, քան 10—20 կիլոմետր տրամագըծով: Դրանք շատ մոտիկ են իրենց մոլորակին. նրանցից անմենամոտիկը 60 անդամ ավելի մոտ է Մարսին, քան Լուսինը—Երկրին, և մոլորակի շուրջը բոլորվում է ընդամենը $7\frac{1}{2}$ ժամվա ընթացքում: Չնայելով այդ մոտիկության, Մարսն իր փոքրիկ արբանյակներից ավելի քիչ լույս է ստանում, քան մեր մեր Լուսից:

Մարսի ուղեծիրի և հետեւյալ մոլորակի—Յուպիտերի ուղեծիրի միջև նորած տարածության մեջ Արևի շուրջը բազմաթիվ փոքր մոլորակներ են շարժվում: Նրանք բոլորը միայն հեռադիտակով են երևում և նրանց սկսել էին հայտնաբերել միայն XIX դարի սկզբից:

Արդեն ավելի քան հազար հինգ հարյուր փոքր մոլորակներ են հայտնաբերված և ամեն տարի մի քանի տասնյակ նորերն են հայտնաբերվում: Նրանց մեծամասնությունը ընդամենը միւրյան մի

բանի տասնյակ կիլոմետր տրամագիծ ունի, բայց կան նաև միքանի խոշորները՝ մինչև 800 կիլոմետր տրամագծով: Եթե հարավով լիներ մինչև այժմ հայտնաբերված բոլոր փոքրիկ մոլորակները միացնել իրար, ապա կտացվեր մի գունդ, որն իր ծավալով մոտավորապես տասն անգամ փոքր կլիներ կուանից:

Փոքր մոլորակների մարզից ավելի հեռու շարժվում է արեգակնային սիստեմի ամենամեծ մոլորակը—Յուպիտերը: Նա ավելի մեծ է, քան մնացած բոլոր մոլորակները միասին վերցրած: Եթե Արեգ պատկերացնենք ձմեռուկի, իսկ Երկիրը կորեկահատիկէ մեծությամբ, ապա Յուպիտերը կլինի մի խոշոր բալ, որովհետեւ նրա տրամագիծը 11 անգամ ավելի է Երկրի տրամագիծից: Անեներացից հետո Յուպիտերը ամենապայծառն է բոլոր աստղերից և մոլորակներից: Նա Արեգ ավելի քան հինգ անգամ հեռու է, քան Երկիրը, այնպես որ նրա վրա պետք է որ շատ ցուրտ լինի: Հեռազիտակով Յուպիտերը դիտելիս ամենահետաքրքիր բանը նրա արբանյակներն են: Այժմ հայտնի է, որ դրանք տասնմեկ հատ են:




Նկ. 8. Յուպիտերը և նրա 4 գլխավոր արբանյակները, ինչպես զբանք երևում են փոքր հեռադիտակով:

Դրանցից չորսը մեր Լուսնից մեծ են: Ամենափոքր հեռազիտակով էլ Յուպիտերի կողքին երևում են այդ չորս աստղիկները, որոնք շարունակ փոփոխում են իրենց դիրքը, ծածկվում են մոլորակի հետեւմ և հետո երևում են նրա մյուս կողմից (Նկ. 8):

Հետեւյալ մոլորակը, Սատուրնը իր ծավալով մի քիչ փոքր է Յուպիտերից, բայց որովհետեւ նա գրեթե եղկու անգամ ավելի հեռու է, ուստի երբեք մեզ այնպես պայծառ չի թվում, ինչպես Յուպիտերը կամ Մարսը: Արեգի շուրջը իր երկար ճանապարհը նա անցնում է համարյա 30 տարվա ընթացքում: Սա ամենահետաքրքիր մոլորակներից մեկն է: Պատկերացնենք սովորաթղթե մի շրջան, մեջ-

տեղում կլոր անցք, ուրիշ խոսքով — մի տափարակ օղակ: Հենց օղակի անցքի մեջտեղում գտնվում է մոլորափի գունդը: Հեռադիտակով նայելիս Սատուրնը այդպիսի տեսք ունի (նկ. 9): Օղակը ոչ մի տեղ չի շփվում մոլորափի գնդին, այլ ազատ կախված է նրա շուրջը և ամբողջ ժամանակ ուղեկցում է մոլորափին, նրա հետ



Նկ. 9. Սատուրնը ուժեղ հեռադիտակով դիտելիս:

միասին թոշելով Արևի շուրջը: Ուժեղ հեռադիտակներով երևում է, որ օղակները նույնիսկ երկուսն են՝ մեկը մյուսի ներսում:

Ապա ինչո՞ւ այդ օղակները Սատուրնի ձգողությունից մինչև չիմա չին ընկել նրա վրա, ջարդ ու փշուր չեն եղել: Գիտությունը պատասխանել է այդ հարցին: Սատուրնի շուրջը ոչ մի կարծր, անընդմեջ օղակ չկա և չի կարող լինել: Սատուրնի օղակը — դա հսկայական կուտակով է՝ մանրագույն արբանյակների, գուցե նույնիսկ ավազանատիկների և փոշեհատիկների, որոնք պատվում են մոլորափի շուրջը՝ յուրաքանչյուրն իր ճանապարհով, ինչպես սովորական մեծ արբանյակները: Պարզվել է, որ Սատուրնը ունի ինն այդպիսի մեծ արբանյակ, բայց հեռադիտակով դրանք ավելի դժվար է դիտել, քան Յուլիտերի արբանյակները:

Բոլոր վեց մոլորակները (այդ թվում հաշված նաև երկիրը), որոնց մասին մենք պատմեցինք, անհիշելի ժամանակներից հայտնի են մարդկանց: Բայց 1781 թվականին անգլիացի երաժիշտ Հերշելը, որը հետո մեծ աստղաբաշխ դարձավ, բոլորովին

անսպասելի կերպով հայտնաբերեց յոթերորդ մոլորակը: Դրան անվանեցին Ուրան: Սա էլ երկու անգամ ավելի հեռու է Սատուրնից և համարյա քսան անգամ հեռու է Արեկից, քան Երկիրը: Այս պատշառով էլ առանց հեռադիտակի նա երևում է իրեւ հազիվ նկատելի մի աստղիկ, որի նման հազարավոր աստղիկներ կան Երկնքում, և նրան կարելի է դիտել միայն հեռադիտակով: Պարզվել է, որ Ուրանն իր տրամադծով շորս անգամ մեծ է Երկրից: Ուժեղ հեռադիտակներով երևում են շորս արբանյակներ, որոնք պատվում են Ուրանի շուրջը: Արևի շուրջը Ուրանի մի պատույտն ութսունշորս տարի է տեսում:

Ութերորդ մոլորակը, որ գտնվում է Ուրանից ավելի հեռու, հայտնաբերվել է բոլորովին արտասովոր եղանակով: Գիտնականները վաղօրեք հաշվել էին, թե երկնքի որ տեղը պետք է ուղղել հեռադիտակիր, որպեսզի տեսնել այն մոլորակը, որն առաջ ոչ ոք չէր տեսել: Այս հաշիվը կատարվել էր ձգողության նույն մեծ օրենքի հիման վրա, որով առաջուց հաշվում են երկնային լուսատուների բոլոր շարժումները: Հիշեցնենք, որ ըստ այդ օրենքի, բոլոր մարմինները ձգում են իրար, օրինակ՝ մոլորակները ձգում են մեկը մյուսին:

Այդ հայտնագործությունը կատարվեց այսպես. երբ սկսեցին առաջուց հաշվել Հերշելի հայտնագործած Ուրան մոլորակի շարժումը, պարզվեց, որ իրականում Ուրանը շարժվում է ո՛չ այնպես, ինչպես նա պիտի շարժվի ըստ ձգողության օրենքի, այլ կարծես թե նրան ամբողջ ժամանակ շեղում է ինչ-որ մի ուժ: Գիտնականները ենթադրեցին, որ Ուրանից շատ ավելի հեռու պետք է որ գտնվի մի մոլորակ, որը դեռ չեն տեսել, և այդ անհայտ մոլորակը իր ձգողությամբ Ուրանի շարժումը շեղում է:

Ֆրանսիացի Լեվերյին և անգլիացի Ադամսը մաթեմատիկական հաշիվների միջոցով որոշեցին, թե այդ մոլորակը (որը շգինված աշխով չի երևում) 1846 թ. սեպտեմբերին երկնքի որ տեղում պիտի գտնվեր: Եվ իսկապես, երբ մի ուժեղ հեռադիտակ ուղղեցին դեպի Երկնքի այդ մասը, ապա արդեն հայտնի հարյուրավոր աստղերի մեջ տեսան նաև մի փոքրիկ աստղ, որն առաջ այնտեղ չկար: Սա հենց նոր մոլորակն էր: Նրան նեպտուն անվանեցին:

Իր ծավալով նեպտունը միայն մի քիչ փոքր է Ուրանից: Նա

Արևից երեսուն անգամ ավելի հեռու է գտնվում, քան Երկիրը, և իր միթխարի ուղեծիրն անցնում է 165 տարվա ընթացքում։ Այսպիսով իր հայտնագործման ժամանակից մինչև հիմա նա դեռ մի լրիվ պտույտ էլ չի կատարել Արեգակի շուրջը։ Առաջիմ նեպտունի միայն մի արբանյակի է հայտնաբերված։

Բոլոր չորս հեռավոր մոլորակները—Յուպիտերը, Սատուրնը, Ուգանը և Նեպտունը—որոշ տեսակետերով խիստ նման են իրար և բոլորովին նման չեն Երկրին։ Նրանք իրենց ուղեծիրներով համեմատաբար դանդաղ են թռչում, այնքան դպնդաղ, որքան մոլորակը հեռու է Արևից (ինչպես և պետք է լինի ըստ ձգողության օրենքի)։ Օրինակ, Նեպտունը մի վայրկյանում անցնում է 5 և կես կիլոմետր, այսինքն հինգ անգամ ավելի դանդաղ է շարժվում, քան Երկիրը։ Բայց իրենց առանցքների շուրջը նրանք շատ արագ են պտտվում, չնայելով իրենց միթխարի մեծության։ Օրինակ, Յուպիտերի և Սատուրնի վրա օր ու գիշերը ընդամենը միայն մոտ 10 ժամ է տևում։ Այդ բոլոր մոլորակները շրջապատված են մթնոլորտով, այն էլ շատ խիստ մթնոլորտով, որը մեր Երկրի մթնոլորտից բոլորովին տարբեր բաղկացություն ունի։ Այդ մոլորակների մըթնոլորտներում բոլորովին աննկատելի է թթվածինը — Երկրի մըթնոլորտի գլխավոր գազը, բայց դրա փոխարեն այնտեղ հսկայական քանակությամբ գտնվում է ամիակ թունավոր գազը, որը արտադրվում է անուշադրասպիրտից։ Վերջապես, Արևի միթխարի հեռավորության հետևանքով այդ մոլորակների վրա պետք է որ շատ ցուրտ լինի, ավելի ցուրտ, քան մեր բնեուային Երկրներում։ Օրինակ, Նեպտունի վրայից Արևն իր տրամագծով պետք է որ թվա 30 անգամ փոքր, քան Երկրի վրայից։ Այդ արդեն ոչ թե կլորակ, այլ կետ է, նա խիստ քիչ տաքություն և լուս է տալիս։

Իններորդ, ամենահեռավոր Պլուտոն մոլորակի մասին առայժմ միայն կարելի է ասել, որ նա Նեպտունից ավելի հեռու է գտնվում և Արևի շուրջն իր մի պտույտը կատարում է 250 տարրում։ Նույնիսկ ամենաուժեղ հեռադիտակներով նա երես է իրու մի փոքրիկ, չուսավզր կետ, որի վրա ոչինչ չի կարելի տեսնել։ Այս մոլորակը հայտնագործվել է միայն 1930 թվականին, Ամերիկայում։

Շատ հավանական է, որ Պլուտոնից ավելի հեռու կան նաև էլ ավելի հեռավոր մոլորակներ. և այն շափով, որով ավելի և ավելի

ուժեղ հեռագիտակներ կկառուցվեն, մենք հետզհետե կհայտնագործենք այդ մոլորակները:


5. ԳԻՍԱՎՈՐ Ա.ՍՏՂԵՐ

Երկնքում երբեմն-երբեմն երևում են պոչավոր կամ գիսավոր աստղեր: Երբեմն այնպիսի գիսավոր աստղեր են երեսում, որոնց պոշերի երկարությունը տասնյակ միլիոն կիլոմետրների է հասնում: Օրինակ, 1910 թ. երեաց երկու այդպիսի գիսավոր աստղ, որոնցից մեկը Հալեյի գիսավոր աստղն էր, որը դիտվում է յուրաքանչյուր 75 տարին մի անգամ (նկ. 10): Առաջ վախենում էին, որ մի որևէ գիսավոր աստղ կարող է իր պոչով դիպչել Երկրին կամ բախվել նրա հետ և մեզ ոչնչացնել կամ թունավորել գաղերով: Գիտությունը ցույց է տվել, որ դրանից չպետք է վախենալ: Գիսավոր աստղը, նույնիսկ ամենամեծը — ոտք թե անընդմեջ կարծր զանդված է ինչպես մոլորակները, այլ փոշու և քարերի մի վիթխարի ամպ, այն էլ շատ նոսր. մի փոշեհատիկից մինչև մյուսը եղած հեռավորությունը կարող է հասնել՝ մի քանի կիլոմետրի: Ինչպես կարելի էր այդ իմանալ: Գիտնականները այդպիսի հետեւթյան են հասնել այն պատճառով, որ յուրաքանչյուր գիսավոր աստղ ունի վիթխարի ծավալ, որը հազարավոր ու միլիոնավոր անգամ մեծ է մոլորակների ծավալից, մինչդեռ գիսավոր աստղի զանգվածը միշտ էլ այնքան փոքր է լինում, որ անկարելի է այն որոշել: Նույնիսկ ամենամեծ գիսավոր աստղերը, որոնց ծա-



Նկ. 10. Հալեյի գիսավոր աստղը 1910 թվականին


վալը միլոնավոր անգամ մեծ է Երկրի ծավալից, ունեն այնպիսի զանգված, որը հազարավոր, գուցե և միլիոնավոր անգամ քիչ է Երկրի զանգվածից:



Նկ. 11. Հալեյի գիսավոր աստղի ուղեծիքը արեգակնային սիստեմում:

Գիսավոր աստղերը, ինչպես և մոլորակները, տիեզերական օդազուրկ տարածության մեջ շարժվում են արեգակի ձգողության ներգործությամբ: Գիսավոր աստղերի ուղեծիքները մեծ մասամբ նույնպես էլիպսներ են, ինչպես և մոլորակների ուղեծիքները, ըստ որում Արեգակը միշտ գտնվում է էլիպսի ֆոկուլարից մեջ: Բայց գիսավոր աստղերի էլիպսները խիստ չափ են ձգված: Նրանց ֆոկուլարը միշտ գտնվում են էլիպսի ամենամեծ տրամագծի ծայրերին շատ ավելի մոտիկ, քան նրա կենտրոնին: Գիսավոր աստղը, որը ընթանում է այդպիսի էլիպսով, կարող է կարճ ժամանակով ավելի շատ մոտենալ Արեգին, քան որևէ մի մոլորակի, իսկ հետո երկար տարիներ այնքան հեռանալ Արեգից ու Երկրից, որ չի երևա նույնիսկ ամենաուժեղ հեռադիտակներով (նկ. 11): Եթե գիսավոր աստղը մոտենում է Արեգին, քարերն ու ավազահատիկները, որոնցից կազմված է նա, սաստիկ տարանում են Արեգի հանա-

գայթներից: Այդ ժամանակ նրանցից սկսում են դուրս գալ գոլորշիներ ու գազեր և գոյանում է վիթխարի, լուսավոր, թափանցիկ մի սյուն: Դա հենց դիսավոր աստղի պոշն է, որը սովորաբար ուղղ-



Նկ. 12. Աստղային անձրեւ 1833 թվականին, ըստ այն ժամանակվա նկարի: Ված է լինում Արևին հակադիր կողմը: Երբ դիսավոր աստղը հեռանում է Արևից և սառչում է, պոշը փոքրանում է, հետո ել բոլորովին կտրշում:

Եթե Հեռադիտուակով ճշտությամբ հետևենք գիսավոր աստղի շարժման, ապա կարող ենք հաշվել, թե քանի տարրուց և ամսից հետո նա կրկին վերադառնալու է դեպի Արևը: Բայց, իհարկե, անկարելի է նախագուշակել այնպիսի գիսավոր աստղի երևալը, որ վերջին անգամ դեպի Արևը վերադարձել է գուցե հազար տարի առաջ և որի մասին ոչ մի տեղեկություն չի հասել մեզ: Այս թե ինչու գիսավոր աստղերը երբեմն բոլորովին անսպասելի կերպով են երևում:

Գիսավոր աստղերը խիստ շատ են: Յուրաքանչյուր տարի, աստղաբաշխները հայտնաբերում են մի քանի գիսավոր աստղ, երբեմն մինչև մի տասնյակ, բայց նրանց մեծ մասը միայն հեռադիտուակով է երևում: Արեգակնային սիստեմի մեջ նրանք ընթանում են տարբեր ուղղություններով: Այս պատճառով էլ կարող է պատահել, որ մի որևէ գիսավոր աստղ դիպչի մի մոլորակի, օրինակ՝ մեր Երկրին: Բայց դա կլիներ ոչ թե սադոսափելի, այլ ընդհատկառակը, շատ հետաքրքիր մի իրադարձություն: Քարերն ու ավազահատիկները, որոնցից բաղկացած է գիսավոր աստղը, կշիկանան Երկրի մթնոլորտին շփմբելոց և ընկնող աստղերի մի ամբողջ անձրևի ձևով կթափեն Երկրի վրա: Այն ժամանակ մենք կտեսնենք Երկնային մի հրաշալի հրավառություն — այսպիսի երևույթներ անցյալում եղել են (նկ. 12): Միայն սակավաթիվ, ամենամեծ քարերը ամբողջովին չեն այրվի օդի մեջ, այլ կհասնեն Երկրին և կընկնեն նրա վրա իրեւ օդաքարեր (մետերոդիտներ): Բայց գիսավոր աստղերի մեջ այդպիսի խոշոր քարերն ամենայն հավանականությամբ խիստ քիչ են, այնպես որ, եթե Երկիրը բաղխվի թեկուզ մեծ գիսավոր աստղի հետ, դժբախտ դեպքեր քիչ կլինեն և ավելի շուտ բոլորովին էլ չեն լինի: Շատ հավանական է, որ նույնիսկ վերջին մի քանի հազարամյակներում Երկիրը քանիցու բաղխվել է մերթ այս և մերթ այն գիսավոր աստղին և այդ բաղխումները բոլորովին աննկատելի են անցել:

II. ԱՍՏՂԱՑԻՆ ՍԻՍՏԵՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. ԱՐԵՎԸ ԵՎ ԱՍՏՂԵՐԸ

Մոլորակները, գիսավոր աստղերը և ընկնող աստղերը կազմում են արեգակնային սիստեմը: Տիեզերքի այդ մարզում թագա-

վլորում է Արևը վիթխարի մի գունդ այնպիսի բարձր ջերմաստիճանով, որ առավելապես դժվար հալվող մետաղները այնտեղ գտնվում են գոլորշու կամ գազի վիխաճկում։ Այդ շիկացած գազային գնդի հզոր ձգողությունը՝ կառավարում է մեր սիստեմի մարմինների շարժումները, մոլորակները պահում իրենց ուղեծիրներում, իսկ նրա ճառագայթիները լուսավորում ու տաքացնում են մոլորակների խավար՝ մակերեսույթները։

Արեգակնային սիստեմը մեզ հսկայական է թվում, բայց նա մի չնշին մասն է կազմում աստղային երկնքի նույնիսկ այն մարզի, որը մենք տեսնում ենք։ Որպեսզի այդ միանգամայն պարզ լինի, ենթադրենք, որ պատրաստված է Տիեզերքի այդ մասի փոքրացրած մոդելը, ըստ որում ամեն ինչ փոքրացված է միլիոնավոր ու միլիոնավոր անգամ։ Այդ դեպքում մեր Արևը կդառնա՝ մեկ ու կես միլիմետր տրամագիծ ունեցող, կուրացուցիչ փայլ արձակող մի ձավարահատիկ։ Մոլորակները կդառնան փոշեհատիկներ, որոնք առանց միկրոսկոպի նկատելի չեն լինի, որովհետև նրանք ոչ միայն փոքր են, այլև իրենք ել լուսավոր չեն։ Փոշեհատիկ—երկիրը կը գտնվի ձավարահատիկ—Արևից 15 սանտիմետր հեռավորության վրա, փոշեհատիկ—Պլուտոնը—մեզ հայտնի մոլորակներից ամենահեռավորը—6 մետր հեռավորության վրա։

Բայց մենք իզո՞ւր կակսեինք Արևի ամենամուտ շրջակայքում ուրիշ լուսավոր ձավարահատիկներ փնտրել։ Հարկավոր կլիներ թոշել 40 կիլոմետր, մինչև որ մենք հանդիպեինք մի ուրիշ Արեգակի, մի ուրիշ լուսավոր ձավարահատիկի՝ այս անգամ կրկնակի շափի։ Երկու միլիմետր տրամագիծ ունեցող փայլուն գնդիկի շորջը մոտ 3 մետր հեռավորությամբ պտտվում է մի ուրիշ ձավարահատիկ։ Դա մեզ հայտնի ամենամուտ Ալֆա աստղն է կենտավրոսի համաստեղության մեջ։ Մեր Միությունում նա չի երևում և նրան կարելի է տեսնել միայն հարավային երկրներում։

Տիեզերքի մյուս մասերում էլ միկրուն բանը կլինի, — փոքրիկ, պայծառ գնդիկներ—աստղեր՝ իրարից տասնյակ կիլոմետրըներով հեռու։ Գնդիկների մեծամասնությունը Տիեզերքի մեր մոդելում կլինի փոքրիկ, ինչպիս ձավարահատիկ—Արևը, և նույնիսկ ավելի փոքրիկ։ Միայն շատ հագլագյուտ դեպքերում բազմա-

Հազար ձավարահատիկներից մեկն ու մեկը կլինի «աստղ—հոկա»՝ ֆուստովի գնդի մեծությամբ և նույնիսկ ավելի մեծ:

Ուշագրավ է, որ շատ աստղեր հեռադիտակով գննելիս երևում են ոչ թե միայնակ, այլ կրկնակի. մեծ աստղ-արևի շուրջը բոլոր վում է փոքր ծավալի մի ուրիշ Արև. երբեմն երկու և ավելի այդպիսի Արև-արբանյակներ են լինում: Նրանք իրենց ուղեծիրներով ընթանում են նույն ձգողության ուժի ներգործությամբ, ինչպես մեր արեգակնային սիստեմի անդամները: Այս պատճառով էլ կարելի է ասել, որ այդ բարդ աստղերը իրենցից ներկայացնում են հեռավոր արեգակնային սիստեմներ, միայն թե խավար և ցուրտ մոլորակների փոխարեն այդ սիստեմներում ինքնալուսատու Արև-մադմին-ներ են բոլորվում:

Ամենավերջին տարիներս ապացուցվեց, որ շատ աստղերի շուրջը, ինչպես և մեր Արևի շուրջը, պետք է որ պատվին խավար մարմիններ, այսինքն մոլորակներ: Այդ մոլորակներից ոչ մեկը հեռադիտակով տեսնել մինչեւ այժմ չի հաջողվել, և գիտնականները նրանց գոյությունն ապացուցել են նույն եղանակով, որով հայտնաբերվել է նեպտուս մոլորակը—հարևան աստղերի նկատմամբ նըրանց ձգողության ներգործման համաձայն: Երբ մենք ավելի ուժեղ գործիքներ կունենանք, իհարկե, նրանց կտևմնենք:

Այսպիսով աստղային աշխարհում գոյություն ունեն նաև ուրիշ մոլորակային սիստեմներ, որոնք նման են մեր արեգակնային սիստեմին:

2. ԱՍՏՂԵՐԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ ձավարահատիկ՝ աստղերի երեակայական աշխարհից մերագանանք իսկական Տիեզերքին:

Մեր մողելի ձավարահատիկները կդառնան շիկացած գնդեր՝ միլիոնավոր կիլոմետր տրամագծերով: Օրինակ՝ մեր Արեգակի տրամագիծը կլինի մոտ 1,400,000 կիլոմետր, իսկ աստղերի միջև եղած հեռավորություններն այնքան վիթխարի են, որ խիստ անհարմար է գրել, թե այդ հեռավորությունները քանի կիլոմետր են կազմում: Հարկավոր կլիներ գրել և հիշել խիստ երկար թվեր՝ բաղկացած առնվազն 14 թվանշանից: Ուստի և այդ մեծ հեռավորությունների համար շափերի մեծ միավորներ են գործադրվում: Այդ-

պիսի մի շափ կոչվում է լուսատարի: Այդպես են անվանել այն տարածությունը, որը լույսն անցնում է մեկ տարվա ընթացքում: Գիտնականները շափի են և գտել, որ լույսը տարածվում է մեծագույն արագությամբ, մի վայրկյանում անցնելով 300,000 կիլոմետր: Համեմատության համար հիշենք, որ ձայնը երեք վայրկյանում անցնում է մեկ կիլոմետր, նշանակում է համարյա մեկ միլիոն անգամ դանդաղ է թռչում, քան լույսը: Երկրում, ոչ մեծ տարածությունների վրա, կարելի է ատել, լույսը ակնթարթային է տեղ հասնում: Լուսնի լույսը մեզ հասնում է մեկ և քառորդ վայրկյանում, Սրբի լույսը—8 րոպեում: Մինչդեռ ամենամոտ աստղի լույսը մեզ հասնում է միայն 4 տարվա ընթացքում: Այլ կերպ դա այսպես են ասում. ամենամոտ աստղի հեռավորությունը կազմում է 4 լուսատարի:

Այդ աստղը, ինչպես ասացինք, մեր Երկրից չի երևում: ՍՍՌՄ-ում հասարակ աշխով տեսանելի աստղերից ամենամոտիկը Սիրիուսն է, ամբողջ երկնքի ամենապայծառ աստղը: Նրա լույսը մեզ հասնում է իննը տարվա ընթացքում: Մեծ Արջի համաստեղության յոթ պայծառ աստղերը շատ ավելի հեռու են գտնվում. նրանցից ամենամոտիկ աստղի լույսը հասնում է ավելի քան 70 տարվա ընթացքում: Էլ ավելի հեռու են: Օրիոն գեղեցիկ համաստեղության աստղերը. նրանց լույսը գալիս է ավելի քան 400 տարվա ընթացքում:

Երբ մենք նայում ենք պատղին, հետաքրքիր է հիշել, որ մենք նրան տեսնում ենք իրեն ոչ այնպիսին, ինչպիսին է նա այժմ, այլ իբրև այնպիսին, ինչպիսին նա եղել է շատ տարիներ առաջ: Օրինակ՝ Մեծ Արջի աստղերը մենք տեսնում ենք այնպես, ինչպես նըւրանք եղել են մոտ 1875 թվականին: Հնարավոր է, որ այն ժամանակներից նրանց հետ ինչ-որպէս փոփոխություններ են կատարվել, բայց դրանց մասին դեռ լույսը մեզ տեղեկություններ չի հասցըել:

Որքան հեռու է աստղը, այնքան գժվար է որոշել նրա հեռավորությունը: Այս պատճառով էլ ավելի հեռավոր աստղերի և մեր մեջ եղած տարածությունը մենք այնքան էլ ճիշտ չգիտենք, իսկ աստղերի մեծ մասի հեռավորությունը առայժմ դեռ բոլորովին անհայտ է:

3. ԱՍՏՂԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Մենք հիմա գիտենք, որ աստեղն անշարժ կախված չեն տարա-

տուծության մեջ, այլ զանազան ուղղություններով, տարբեր արագությամբ թռչում են մի վայրկյանում մի քանի կիլոմետրից մինչև մի քանի հարյուր կիլոմետր։ Համեմատության համար հիշեցնենք, որ մեր Երկիրը Արևի շուրջը թռչելիս յուրաքանչյուր վայրկյանում 30 կիլոմետր է անցնում։

Այսպիսով աստղերը, որոնք առաջ անշարժ էին համարվում, իրականում շարժվում են, այն էլ շատ արագ։ Բայց նրանք մեզանից շատ հեռու են գտնվում։ Դրա համար էլ աստղը պետք է բաղմամիլիոն կիլոմետրներ անցնի և միայն այդ ժամանակ մենք կնկատեք, որ նա մի քիչ շարժվել է իր տեղից։ Այն ժամանակվանից, երբ մարդիկ սկսեցին դիտել երկնային լուսատուները, մի քանի հազար տարի է անցել։ Այդ ժամանակվա ընթացքում աստղերը վիթխարի տարածություններ են կտրել։ Եվ՝ այնուամենայնիվ, եթե երկու-երեք հազար տարի առաջ ապարծ մարդիկ կարողանալին այժմ նայել աստղալից երկնքին, նրանք որևէ նկատելի փոփոխություն չեն գտնի համաստեղությունների ձևերի մեջ։ Բայց դա միայն այն պատճառով է, որ նրանք առանց հեռադիտակների, հասարակ աշխով են դիտել երկինքը։ Իսկ հիմա աստղաբաշխները աստղերի դիրքը որոշում են հեռադիտակների միջոցով, որոնք ունեն չափելու հատուկ պարագաներ, և դրա շնորհիվ հաջողվել է բացահայտել հազարավոր աստղերի դիրքերի փոփոխությունը։

Այն աստղերից, որոնք մեզ մոտ տեսանելի են հասարկ աշխով, առանձնապես արագ է շարժվում եղնարածի (այսինքն հովվի) համաստեղության Սրկառուր կոչված պայծառ-դեղնավուն աստղը։ Հինգ հազար տարվա ընթացքում Սրկառուրը տեղաշարժվել է լրիվ կուսի վեց տրամաժծի շափ, յուրաքանչյուր վայրկյանում թռչելով 130 կիլոմետր։ Սակայն այնուհանդեմ, համաստեղության ձևը շատ դանդաղ է փոփոխվում (նկ. 13)։ Կան աստղեր, որոնք էլ ավելի շուտ են փոխում իրենց դիրքը, բայց հասարակ աշխով նրանք անտեսանելի են։ Միայն մի քանի տասնյակ հազար տարուց հետո նկատելի կդառնա համաստեղությունների փոփոխությունը, և մենք կարող ենք ասել, թե նրանք ինչպիսի տեսք կունենան։ Օրինակ՝ մենք գիտենք, թե Մեծ Արջի շերեփը ինչպիսի տեսք է ունեցել մարդկության պատմության սկզբից դեռ շատ առաջ և ինչպիսի տեսք կունենա, օրինակ, 50 հազար տարուց հետո (նկ. 14)։

Մեզ այնպես է թվում, թե աստղերն ուղիղ գծով են շարժվում՝ իրականում աստղերը, ինչպես մոլորակներն ու գիտավոր աստղերը, շարժվում են կոր գծերով, բայց մեր դիտումների ժամանակ նրանք իրենց ուղեծիրների այնքան քիչ մասն են անցել, որ մեզ դեռ չեն հաջողվել նկատել այդ գծերի կորացումը:

Ինչի՞ շուրջն են պտտվում աստեղը: Ո՞ր ուժն է կառավարում նրանց շարժումը: Սկզբում կարծում էին, թե «աստղային» սիստեմը նման է արեգակնային սիստեմին, միայն թե վերջինից շատ




Նկ. 13. Եգնաբածի համաստեղությունը մեր թվականությունից 3000 տարի առաջ (ձախից) և նույն համաստեղությունը ներկայումս (աջից):

Նկ. 14 Մեծ Արշի համաստեղությունը I.—50000 տարի առաջ, II—ներկայումս, III—50000 տարուց հետո:

ավելի մեծ է: Կարծում էին, թե բոլոր աստղերը բոլորիցում են ինչոր մի-գուատառույի շուրջը, ինչպես բոլոր մոլորակները բոլորվում են Արեի շուրջը: Բայց եթե գոյություն ունենար այդպիսի մի ոկենտրոնական Արե, ապա նա պետք է որ շատ ավելի մեծ լիներ բոլոր աստեղից միասին վերցրած, ինչպես մեր Արեը շատ ավելի մեծ է բոլոր մոլորակներից: Այդպիսի գերլիթիսարի մի մարմին, որը միւնարդավոր անդամ մեծ լիներ Արեից, չի գտնված, և ժամանակակից գիտությունն ապացույցում է, որ այն չի էլ կարող գոպությունն ունենալ:

Բայց ժամանակակից աստղաբաշխությունը բացահայտել է,



որ կենտրոնական Արևի փոխարեն աստղային սիստեմում կա կենտրոնական խտություն, կա մի մարզ, որտեղ աստղերի միջև եղած հեռավորությունները ավելի փոքր են, քան մեր Արևի շրջակայրում։ Այդ մարզը գտնվում է աստղային սիստեմի կենտրոնում։ Հենց այդ կենտրոնական խտության շուրջն էլ բոլորվում են մեզ համար տեսանելի բոլոր աստղերը, այդ թվում նաև մեր Արևն իր շրախմբով — մոլորակներով ու գիսավոր աստղերով։ Ավելի ձիշտ ասած՝ բոլոր աստղերը բոլորվում են աստղային սիստեմի ծանրության կենտրոնի շուրջը, իսկ այդ ծանրության կենտրոնը գտնվում է կենտրոնական խտության ներսում։ Նրա շուրջն իհարկե պտտվում են նաև բոլ իսկ խտության աստղերը։

Աստղերն առհասարարեկ կանոնավոր շրջագծերով չեն շարժվում։ Կան աստղեր, որոնք մոլորակների ուղեծիրներին նմանվող գծերով են պտտվում, կան և այնպիսիները, որոնք գիսավոր աստղերի ուղեծիրներին նմանվող երկայնաձիգ գծերով են պտտվում։ Աստղերը կարող են հասնել ու անցնել մեկը մյուսից, թռչել իրար դիմաց, իրենց ձգողությամբ շեղել մեկ-մեկու և այլն։ Մի խոսքով՝ այստեղ շարժումները շատ ավելի բարդ են, քան մեր արեգակնային սիստեմում, և գիտությունը նոր է սկսում դրանք պարզաբանել։

Այն աստղերը, որոնք գտնվում են մեր Արեգակի ամենամոտ շրջակայրում, մեկ քոլորումը կատարում են առնվազն հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում։ Հիշատակենք, որ մեզ ամենամոտիկ այդ մի քանի հազար աստղերը երեմն տեղական սիստեմ են կոչվում։

4. ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ՇԱՐԺՈՒՄԸ


Մեր Արևը նույնպիսի աստղ է, ինչպես և մյուս միլիոնավոր աստղերը, և պետք է որ նա էլ շարժվի։ Այդ առաջին անգամ ապացուցեց մեծ աստղաբաշխ Հերշելը (որը հայտնաբերեց Արտան մոլորակը)։ Այդ շարժումը չպետք է շփոթել Արևի երևութական (թվայող), օրական և տարեկան շարժումների հետ, որոնք հետեւ վանք են Երկրի շարժման։

Հերշելի հայտնաբերած շարժումն այն է, որ ամբողջ արեգակնային սիստեմը հավասարաշատի շարժվում է միկնուցն ուղղությամբ։ Այդ շարժումը բնակի չի ազդում մեր սիստեմում տեղի ու-

նեցող բոլոր մյուս շարժումների վրա, օրինակ՝ Արեգի շուրջը երկրի բոլորման վրա:

Այդ շարժումը կարելի է բացահայտել միայն աստղերի թվացող շարժումից: Եթե բոլոր աստղերն ել բոլորովին անշարժ լինեին և միայն մեր արեգակնային սիստեմը շարժվեր, ապա աստղերի հետ կկատարվեր նույնը, ինչ որ գիշերը կատարվում է մեծ քաղաքի լույսերի հետ, երբ մենք մոտենում ենք նրանց. աստղերը տարբեր կողմեր կցըրվելին երկնքի այն կետից, զեպի ուր մենք սըլանում ենք, իսկ հակադիր կողմում, որից հեռանում ենք մենք, նրանք կմոտենային իրար:

Բանից զուրա եկավ, որ իրոք այդպիս է: Ճիշտ է, աստղերը ունեն նաև իրենց սեփական շարժումները, այնպիս որ այնքան էլ հեշտ չէ գտնել այն կետը, որից նրանք ցրվում են, բայց և այնպիս, այդ խնդիրը կարելի է լուծել: Հերշելը զտավ, որ աստղերը դեպի տարբեր կողմեր են շարժվում Հերկուլեսի համաստեղության մի կետից. դեպի այդ կետն էլ թոշում է արեգակնային սիստեմը:



Ցկ. 15. Շնորհիվ այն բանի, որ ամբողջ արեգակնային սիստեմը ուղիղ դժու թոշում է զեպի Հերկուլեսի համաստեղությունը, երկիրը զեպի այդ համաստեղությունն է թոշում պարուրաձև զժով:

Այդ կետից ոչ հեռու գտնվում է պայծառ, սպիտակ վեցա աստղը՝ որը ամառային երեկոներին բարձր կանգնած է երկնքի հենց մեջտեղին մոտ: Հիմա նույնիսկ հայտնի է, որ մեր արեգակնային սիստեմը այդ ուղղությամբ թռշում է մի վայրկյանում 20 կիլոմետր արագությամբ (նկ. 15): Այսպիսով յուրաքանչյուր երեկո ավելի քան մեկ միլիոն կիլոմետր մենք մոտ ենք լինում վեցային, քան նախընթաց օրը: Բայց վեգան դրանից բոլորովին էլ չի պայծառանում: Պետք է անցնի մի քանի հազար տարի, և միայն այն ժամանակ մենք կնկատեինք, որ Վեգայի պայծառությունը մի քիչ ավելացել է: Աստղերն այնքան հեռու են, որ բազմամիլիարդ կիլոմետրերով նրանց մոտենալը շափազանց չնշին մեծություն է նրանց հեռավորության համեմատությամբ:

Այսպես է շարժվում մեր արեգակնային սիստեմը աստղերի այսպիս կոչված՝ «տեղական սիստեմի» ներսում: Բայց Տիեզերքում ոչ մի անշարժ քան չկա, այս պատճառով էլ ամբողջ «տեղական սիստեմը» պետք է որ մի ինչ-որ շարժում կատարի: Միայն 1927 թվականին Հոլլանդացի աստղաբաշխ Օորտը հայտնաբերեց, այդ շարժումը՝ Պարզվեց, որ տեղական սիստեմի աստղերը, այլ թվում նաև Արեգակը, բոլորվում են աստղերի հեռավոր, կենտրոնական խոռության շուրջը, ինչպես մոլորակները բոլորվում են Արեգակի շուրջը: Այդ պտույտը տեղի է ունենում վիրթիսարի արագությամբ, միշտն հաշվով մի վայրկյանում մոտ 300 կիլոմետր: Բայց տեղական սիստեմի ո՛չ բոլոր աստղերն են շարժվում միևնույն արագությամբ և միևնույն ուղղությամբ: Օրինակ՝ Արևը մի վայրկյանում 20 կիլոմետրով ավելի արագ է թռշում և թիքվում է վեցայի կողմը, որը թռշում է հեռու, առցեսում: Արագությունների հենց այս տարբերությունն էր, որ Հերշելը նշեց հարյուր հիսուն տարի առաջ:

5. ԱՍՏՂԵՐԻ ԹԻՎԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Որքան մեծ է հեռադիտակը, այնքան նրանով շատ թվով թույլ աստղեր են երևում: Ժամանակակից մեծագույն հեռադիտակներով առնվազն հարյուր միլիոնավոր աստղեր են երևում. այս թիվը գեռ հշտությամբ պարզված չէ: Աստղերը երկնքում բոլորովին անկանոն և անհաջասարաշափ են ցրված: Նրանք առավելապես շատ են

այն պայծառ, լայն շերտում, որը Շիր Կաթին (այսինքն ծիր կաթ-նավուն) է կոչվում։ Ամառային ու աշնանային երեկոներին նա առանձնապես գեղեցիկ է, երբ բարձր է կանգնած և երկու կեսի է բաժանում ամբողջ երկինքը։

Շիր Կաթինը շարունակվում է նաև երկնքի այն մասում, որը մեզ մոտ երբեք չի երևում, և անընդմեջ օղակով պատում է առմուղ երկինքը։ Ինչպես ցույց է տալիս հեռադիտակը, Շիր Կաթինը բարկացած է հարյուրավոր միլիոն թույլ աստղերից։ Հասարակ աշխավայր այդ աստղերը առանձին-առանձին չեն երևում, բայց նրանց լույսերը միախառնվում և մի ընդհանուր, համատարած փայլ են տարածում, որը մենք առանց հեռադիտակի էլ ենք տեսնում։ Շիր Կաթինը աստղերն անհավասարաշափ են դասավորված, այնտեղ կան տեղեր, որոնք շատ հարուստ են աստղերով, կան նաև բոլորվին անաստղ տարածություններ։

Փետք է ասել, որ ինչքան հեռու գնանք Շիր Կաթինի գոտուց (դեպի հյուսիս թե հարավ, այդ միևնույն է), այնքան քիչ են հեռադիտակով թույլ աստղեր երևում։ Դրանք ամենից քիչ են երկնքի այն երկու հակագիր կետերի մոտ, որոնք առավելապես հեռու են Շիր Կաթինից։ Աստղային երկնքի այդ կետերը կոչվում են Շիր Կաթինի բեկեռներ, մեկը — հյուսիսային, մյուսը — հարավային բեկեռն։

6. ՄԻՐ ԿԱԹԻՆԸ ՈՐՊԵՍ ԱՍՏՂԵՐԻ ՄԵԾ ՍԻՍՏԵՄ

Մեր Արեր շարքային մի աստղ է աստղերի մեծ խմբի մեջ, որին անվանում են Միր Կաթինի սիստեմ կամ Գալակտիկա։ Աստղերի այս կուտակումը ունի հսկայական, բայց ո՛չ անսահման ծավալ, և բաղկացած է շատ մեծ, բայց ո՛չ անհամար քանակությամբ աստղերից։

Գալակտիկան ունի տափակած ձև, մոտավորապես գրպանի շատ տափակ ժամացույցի ձև, այնպես որ կուտակման երկարությունն ու լայնությունը բազմապատիկ անդամ ավելի են նրա բարձրությունից։ Արևն իր մոլորակներով գտնվում է կուտակման ներսում, բայց նրա կենտրոնից հեռու եթե աստղերի սիստեմը համեմատենք գրպանի ժամացույցի հետ, ապա Արեր կլինի ժամացույցի ներսում, նրա մեջտեղի հարթակում, այսինքն վերին և ստո-

ըին կափարիչից միւնույն հեռավորության վրա, ու մոտավորապես ժամացույցի կենտրոնից մինչև նրա շրջանակը եղած տարածության կեսում: Ենթադրենք թե Արեւ գտնվում է այն տեղի տակ, ուր ամրացված է վայրկյանացույց սլաքը: Պատկերացնենք, որ ժամացույցի ներակ ամբողջ տարածությունը մոտավորապես հավասարաշափած է աստղերով և այդ բոլոր աստղերը երևում են մեզ: Մեր արեգակնային սիստեմից մենք ո՞ր ուղղությամբ ավելի շատ աստղեր կտեսնենք և ո՞ր ուղղությամբ— ավելի քիչ: Ակներեւ է, որ ամենից քիչ աստղեր կլինեն վերևում, ժամացույցի թվատախտակի ուղղությամբ, ու ներքեւում, որովհետև այդ ուղղություններով կուտակումը ավելի բարակ է, ավելի մոտիկ է վերջանում: Մենք ավելի շատ աստղեր կտեսնեինք շուրջը, ժամացույցի շրջանակի երկայնքով: Այս ուղղությամբ կուտակումը ավելի հեռու է ձգվում և բացի դրանից, կուտակման մեջտեղի հարթակում աստղերն ըստ երեւութին ավելի խիտ են, քան մնացած մասում: Այստեղից էլ դուրս է գալիս, որ երկնքի այն մարզը, ուր ավելի շատ աստղեր են երևում, պետք է որ օղածե շրջապատի ամբողջ երկինքը: Դա հենց Միր Կաթինի գոտին է: Իսկ երկնքի այն տարածությունները, ուր ամենից քիչ աստղեր կան, պետք է գտնվեն Միր Կաթինի բեմեների մոտ:

Բայց Միր Կաթինի օղակի ո՞չ բոլոր մասերն պետք է միատեսակ պայծառ երևան: Միր Կաթինի ամենապայծառ և աստղերով ամենահարուստ մասը կլինի այն մարզը, որը ընկած է ժամացույցի թվատախտակի 12 թվի ուղղությամբ, որովհետև այս ուղղությամբ Գալակտիկան ավելի հեռու է ձգվում: Բացի դրանից այդ կողմում է գտնվում սիստեմի կենտրոնը, որի մոտ աստղերն ըստ երեւութին ավելի խիտ են, քան կուտակման ծայրամասերում: Իրականում էլ հենց այդպես է: Միր Կաթինի մի մասը, հենց այն մասը, որը երևում է ամառը, առանձնապես պայծառ և հարուստ է աստղերով, իսկ նրա ձմեռային մասը (6 թվանշանի ուղղությամբ) համարյա աննկատելի է:

Միր Կաթինի ամբողջ կուտակումն այնքան մեծ է, որ լույս նրա մի ծայրից մինչև մյուսն անցնում է մոտավորապես 100 հազար տարվա ընթացքում: Նա բաղկացած է միլիարդներով (այսինքն հազար միլիոններով) աստղերից, որոնց շուրջը հավանողին

մոլորակներ են պատվում, որոնք առաջժմ անմատչելի են ժամանակակից հեռաղիտակներին: Բայց միայն աստղերը չեն, որ գոյություն ունեն Ծիր Կաթինում: Նրա մեջ մեծ տարածությունն են բռնում մշուշազանգվածները, որոնք թուզլ լուսավորված ամպերի տեսք ունեն: Դրանք փոշու և նոսր գագեղի վիթխարի կուտակումներ են: Նրանց կարելի է տեսնել միայն հեռաղիտակով: Մշուշազանգվածները աստղերից շատ ավելի մեծ են, նրանց տրամագծերը տասնյակ լուսատարիներ են կազմում: Նրանք մեզանից նույնապես հեռու են գտնվում, ինչպես և աստղերը:

Առանձնապես վիթխարի են լույս շրվող, խալար մշուշազանգվածները: Նրանց գոյության մասին մենք իմացել ենք միայն այն բանի շնորհիվ, որ նրանք թափանցիկ չեն, թանձր ծխի են նման և մեզանից ծածկում են իրենց հետևում գտնվող աստղերը: Ծիր Կաթինի պայծառ շերտում այդ մշուշազանգվածները ունեն սև բծերի, չեղքվածքների ձև՝ խիտ աստղերով պատած ֆոնի վրա (նկ. 16):

Նրանք առանձնապես շատ են Ծիր Կաթինի ամենապայծառ, կենտրոնական մասում: Բոլորն էլ գիտեն, որ Ծիր Կաթինի այն մասը, որը երևում է ամառը, կըրկնակի է թվում: Այստեղ Ծիր Կաթինը երկնքի վրա փոլած է: Երկու շերտով: Իրականում այդ երկու ճյուղերը միայն եղբերն են մի պայծառ, լայն շերտի, որի մնչտեղը մեզառնից ծածկված է փոշու և գագերի: Խալար զանդվածներով:

Այն բոլոր մշուշազանգվածները, որոնք գտնվում են Ծիր Կաթինում, այժմ Գալակտիկ մշուշազանգվածներ են կոչվում: Ինչպես մենք կիմանանք, մշուշազանգվածներ գոյությունը ունեն նաև Ծիր Կաթինի սահմաններից դուրս, բայց նրանց բնությունը բոլորովին այլ է:



Նկ. 16. Ծիր Կաթինի մի մասը
Խալար մշուշազանգվածներով:
Ինչպես մենք կիմանանք, մշուշազանգվածներ գոյությունը ունեն նաև Ծիր Կաթինի սահմաններից դուրս, բայց նրանց բնությունը բոլորովին այլ է:

Շիր Կաթինի կուտակման բոլոր աստղերը շարժման մեջ են դառնվում: Հավանութեն նրանք բոլորվում են Գալակտիկայի կենտրոնի շուրջը, ինչպես արեգակնային սիստեմի մոլորակներն ու դիսալոր աստղերը բոլորվում են Արևի շուրջը: Պառվտի ժամանակաշրջանները ընդհանրապես պետք է որ լինեն այնքան երկար, որքան որ աստղը հեռու է Գալակտիկայի կենտրոնից:

III. ԾԻՐ ԿԱԹԻՆՆԵՐԻ ՄԵՇ ԳԵՐՍԻՍՏԵՄԸ

I. ԽՆՁ Է ԳՏՆՎՈՒՄ ԾԻՐ ԿԱԹԻՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՐԽԲՍ

Լույսի արագությամբ մտքով սլանանք ուղիղ գծով: Մեր երեղակայական թոփշքը աստղային աշխարհի որ կողմն էք որ ուղղված լինի, մի քանի տասնյակ հազար տարուց հետո մենք կնկատենք, որ մեր շուրջը աստղերը նորանում են և վերջ ի վերջո մենք դուրս կթռչենք մեր Գալակտիկայից, նրա բոլոր աստղերը կմնան մեր հետեւում: Իսկ առջևում ի՞նչ կլինի:

Ժամանակակից գիտությունը կարող է պատասխանել այդ հարցին: Առջևում, գրեթե անսատղ երկնքում մենք կտեսնենք ոգիշ աստղային սիստեմներ, ուրիշ, շատ հեռավոր գալակտիկաներ: Այդ աստղային սիստեմները, որոնք մեր Ծիր Կաթինի սահմաններից դուրս են գտնվում, երևում են նաև երկրի վրայից: Կան աստղային սիստեմներ, որոնք կոչվում են գնդանման աստղային կուտակումներ, կան և այնպիսինները, որոնք արտադալակտիկ մշուշագանգվածներ են կոչվում:

2. ԳՆԴԱԶԵՎ ԱՍՏԳԱՅԻՆ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ

Գնդաձև աստղային կուտակումները ոչ մեծ հեռագիտակով դիտելիս փոքրիկ, կլոր մշուշային բծեր են թվում (նկ. 17): Միայն ուժեղ հեռադիտակներով կարելի է տեսնել, որ այդ բծերից ամեն մեկը բաղկացած է տասնյակ հազարավոր շատ թույլ աստղերից: Այդ բոլոր աստղիկները իրականում հեռավոր արևներ են, շատ պիելի պայծառ, քան մեր Արևը, իսկ յուրաքանչյուր մշուշային բիծը աստղային սիստեմ է, որը մոտավորապես գնդի ձև ունի: Գնդաձև կուտակումների տրամագծերը հարյուրավոր լուսատարիներ են կազմում: Այսպիսով այդ կուտակումները ավելի փոքր են մեր Ծիր Կաթինի կուտակումները:

թինի աստղային սիստեմից, բայց նրանց մեջ աստղերն ավելիշ խիտ են դասակարգված: Մինչև այժմ հայտնաբերված են երես հարյուրից ոչ ավելի զնդաձեւ կուտակումներ:



Նկ. 17. Գնդաձեւ աստղային
կուտակում:

Համեմատաբար փոքր այդ գալակտիկաները բոլոր կողմերից շրջապատում են մեր վիթխարի Գալակտիկան՝ 2—3 հարյուր հազար լուսատարիներից ոչ ավելի հեռավորություններով: Նրանց համեմատում են մեծ քաղաքի շուրջը եղած փոքրիկ ավանների հետ: Նրանց կարելի է անվանել նաև Գալակտիկայի արբանյակներ, որովհետեւ մեր աստղային սիստեմի միջիաբդավոր արեգակների ձգողության ներգործությամբ գնդաձեւ կուտակումները բոլորվում են նրա շուրջը՝ ինչպես արբանյակները մոլորակի շուրջը:

3. ԱՐՏԱԳԱԼԱԿՏԻԿ ՄՇՈՒՇԱԳԱՆԳՎԱԾՆԵՐ

Էլ ավելի հետաքրքիր են արտագալակտիկ մշուշագանգվածները: Դրանք արդեն միջիոնավոր քանակությամբ են հայտնաբերված, որքան ուժեղ է հեռագիտակը, այնքան շատ այդպիսի մշուշագանգվածներ է ցույց տալիս: Նրանց մեծ մասը պարուցի ձևունի (նկ. 18). Կլոր մշուշային բծից դուրս են գալիս երկու շերտեր կամ ճյուղեր և երկուսն էլ ոլորվում են մի կողմի վրա: Այնպես է թվում, թե այդ շերտերը պետք է որ բաղկացած լինեն փոշուց կամ գաղղից, ինչպես գիսավոր աստղերի պոչերը:

Եվ ի՞նչ է պարզվել: Պարուրաձեւ շերտերը իսկապես բաղկացած են փոշեհատիկներից, բայց յուրաքանչյուր փոշեհատիկը աստղ է, այսինքն արեգակ: Այս արտասովոր հայտնագործությունը 1925 թվականին կատարվել է Ամերիկայում, աշխարհում՝ ամենամեծ հայելավոր հեռադիտակի միջոցով: Միլիոնավոր արեգակներ են սլանում մշուշագանգվածի շերտերում, ինչպես ուշնում են ածխափոշեհատիկները ծխի սյան մեջ:

Հենց այն ժամանակ էլ հաջողվեց մոտավոր կերպով շափելու որոշ արտագալակտիկ մշտագանգվածների հեռավորությունը:



Նկ. 18. Պարուրած մշտագանգված.

Երինակ՝ պարզվեց, որ Անդրոմեդայի համատեղության (նկ. 19) ամենամոռակի մշտագանգվածներից մեկի լույսը գալիս է մոտ մեկ միլիոն տարվա ընթացքում: Այսոր մենք այն հեռավոր աշխարհում ահանում ենք այն, ինչ որ այնտեղ եղել է մեկ միլիոն տարի առաջ:

Այդ մշուշագանգվածը կարելի է տեսնել հասարակ աշխավ։
Եթա տրամագիծը կազմում է մոտ 50 հազար լուսատարի, այսինքն
ժիայն մի քիչ է պակաս Ծիր Կաթինի տրամագծից։ Այսպիսով այս
վիթխարի աստղային սիստեմը, որ նման է մեր Ծիր Կաթինին,



Ֆլ. 19. Պարույրաձև մեծ մշուշագանգված Անգրօմեգայի համաստեղությունում

ուրիշ գալակտիկա է: Մնացած արտադալակտիկ մշուշազանգված-ները նույնպիսի ծավալներ ունեն, բայց նրանք է՛ լ ալիքի հեռու են գտնվում: Ամենաթույլ արտադալակտիկ մշուշազանգվածները, որոնք հազիվ են տեսնվում մեծագույն հետարկիտակներով, այսքան հեռու են գտնվում, որ նրանց լուսը մեղ հասնում է հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում: Եվ յուրաքանչյուր այդպիսի մշուշազանգված արեգակների վիթխարի կուտակում է, ինչպես ասում են «աիեղեղբ-կղզի» է տիեզերական տարածովյան օվկիանոսում:

Այդպիսի մի կղզուց մինչև հարևան կղզին եղած հետավորությունը կազմում է 1—2 միլիոն լուսատարի, երբեմն դրանից պակաս: Մեր ամբողջ վիթխարի Գալակտիկան այդպիսի տիեզեղբ-կղզիներից մեկն է անսահման տարածության մեջ: Եթե մենք կարողանացինք մի որևէ սորիշ Գալակտիկայից նաշել նրան, մենք կը տեսնեինք մի սովորական փոքրիկ մշուշազանգված, գուցե և պարուզի ձևի, ինչպես տիեզերբ-կղզիների մեծամասնությունն է: Մեր Գալակտիկ սիստեմի պարույրի այդ ձևը մենք չենք նկատում այն պատճառով, որ գտնվում ենք Գալակտիկայի ներսում, միլիոնավոր տատղերի միջև, և ինչպես ասում են, ծառերի հետեւց չենք տեսնում անտառը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հանրագումարի բարենք այն, ինչ որ մեղ հիմա հայտնի է Տիեզերքի կառուցվածքի մասին:

Մեր Երկիրը, որը մենք երբեմն սիսալմամբ անվանում ենք «աշխարհ» կամ «Տիեզերք», միայն մեկն է Արևի շուրջը բոլորվող մոլորակներից: Բոլոր մոլորակներն Արևի հետ միասին կազմում են արեգակնային սիստեմը: Երկիրը արեգակնային սիստեմի անդամներից մեկն է: Այդ սիստեմի ծավալը հարյուր հազարավոր անգամ մեծ է Երկորի ծավալից:

Բայց Արևը միայն մեկն է միլիարդավոր աստղերից, որոնք կազմում են Մեր Կաթինի աստղային սիստեմը կամ Գալակտիկան: Այսպիսով մեր արեգակնային սիստեմը իր հերթին հանդիսանում է Գալակտիկայի շարքային անդամ: Գալակտիկայի ծավալը բազմամիլիոն անգամ մեծ է արեգակնային սիստեմի ծավալից:

Վերջապես, նորիքս ապացուցվել է, որ Մեր Կաթինի աստղային

սիստեմը կամ Գալակտիկան միայն մեկն է միլիոնավոր իր նման աստղային սիստեմներից. նա հանդիսանում է Միր Կաթինների մեծ սիստեմի, կամ ինչպես երբեմն ասում են, Գալակտիկաների գերախտեմի շարքային անդամը։ Միր Կաթինների այդ սիստեմի ուսումնասիրությունը նոր է սկսվում։

Ընթերցողներին երբեմն ապշեցուցիչ և անհավանական է թը-վում, որ քրկնային լուսատուներն այդշափ վիթխարի հեռավորությունների վրա են գտնվում, որ տիեզերական սիստեմներն այդպիսի վիթխարահակա ծավալներ ունեն։ Բայց այստեղ ոչ մի ապշեցուցիչ բան չկա. Տիեզերքն անսահման է, և պետք է որ գոյություն ունենան էլ ավելի մեծ հեռավորությունների վրա գտնվող լուսատուներ։ Զարդանալին ոչ թե այդ է, այլ այն, որ մարդկությունը կարողացել է շափել այդ տարածությունները։

Ճշգրիտ գիտությունը գոյություն ունի ընդամենը մի 3—4 հարյուրամյակ, նա, կարելի է ասել, նոր է սկսվում, և այդ ժամանակվա ընթացքում նրա ձեռք բերած հաջողությունները մեզ արդեն վիթխարի են թվում։ Բայց գիտության զարգացումն ավելի և ամենա արագ է ընթանում և մարդկության առջև այնքան շատ ժամանակ կա։ Այս պատճառով էլ այժմ անկարելի է նույնիսկ մուտքութապես պատկերացնել, թե ինչպիսի հզորության կհասնեն հեռավոր ապագայի գիտությունն ու տեխնիկան և ինչպես նրանք կփոխեն մարդու կյանքն ու մեզ շրջապատող բնությունը։




ԲՈՒՂԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ներածություն	3
1. Երկիրը և Երկինքը	3
2. Երկիրի շարժումը	4
3. Լուսինը Երկիրի արբանյակն է	7
4. Երկնային լուսատուներ	8
I. ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՍԻՄՏԵՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	12
1. Մոլորակները և նրանց շարժումը	12
2. Արեգակնային սիստեմը	14
3. Տիեզերական ձգողություն	16
4. Մոլորակների նկարագրությունը	18
5. Գիսավոր աստղեր	28
II. ԱՍՏՋԱՅԻՆ ՍԻՄՏԵՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	31
1. Արել և անտղեռը	31
2. Աստղերի հեռավորությունը	32
3. Աստղերի շարժումը	34
4. Արեգակնային սիստեմի շարժումը	37
5. Աստղերի թիվը և նրանց դասավորությունը	39
6. Միր Կաթինը որպես աստղերի մեջ սիստեմ	47
III. ՄԻՒՐ ԿԱԹԻՆՆԵՐԻ ՄԵԾ ԳԵՐՄԱՆԻՍՏԵՄԸ	43
1. Ի՞նչ է գտնվուած Միր Կաթինի սահմաններից գույք	43
2. Գնդաճ աստղային կուտակումներ	43
3. ՀԱՐՄԱԳԱԼԱԿՈՒԿ մշուշաղանգվածներ	44
Եգրակացություն	47

Թարգմանիլ՝ Հ. Մազմանյան
 Թարգմ. Խմբ.՝ Լ. Սեմյոնով
 Տեխ. խմբ.՝ Ի. Վարդանյան
 Սրբագրիլ՝ Մ. Մարգարյան
 Կոնտրոլ սրբագրիլ՝ Վ. Տարախյան

ՎՖ 02618 Պատվեր № 70, Տիրաժ՝ 3000, տպագր. Յ մամ., հեղ. 2, հանձնված է
 արտադրության 24.VII 1947թ., ստորագր վաժ է տպագրության 26.III 1948թ.
 Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. Վարչ. № 2
 տպարան, Երևան—1948թ.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0011851

ԳԻՒԾ 2 Ռ. 50 Կ.

A —
19469